

W. H. ...

U 5 r

## ՆՈՑՆ ՀԵՂԻՆԱԿԷՆ

### ՏՊԱԳՐՈՒԱՆ


Հոգեր (Քերթուածներ 1901)	Սպասած
Հրատալի Յարուքիւն (Քերթուածներ 1914)	Գին 15 Ֆր.
Կես գիշերեն մինչեւ արտալոյս (Քերթուածներ 1918)	α 12 Ֆր.

### ՏՊԱԳՐԵՆԼԻ

Կեսարիա (Քղեւորական նօթեր)  
Երկ Տերը կամենայ (Վեպ)  
Ճանիլ եւ այլ (Պատմութեան)  
Մարտ Ֆուրուսի արկածը (Վիպակ)  
Հովանար հոգւոյ (Արձակ եւ ոստնաւոր երգիծանք)  
Մամլոյ պայքար (Ընտրուած յօդուածներ)

Այս գիրքէն տպագրուած է 25 օրինակ (1-25)  
մասնաւոր թուղթի վրայ:

ՎԱՀԱՆ ՔԷՔԷՆԱՆ



ՔԵՐԹՈՒԱՇՆԵՐ

( 1919 - 1933 )

A  $\frac{II}{53490}$

ՓԱՐԻՉ

1933





## Ե Ր Ե Ք Զ Օ Ն

## II.

## Ա Ա Տ Ո Ւ Ծ Ո Յ

Ինչ որ ջրիւր՝ կը դարձընեմ զայն Բեզի,  
Անա՛, Աստուած...: Օտորոցիս բարձիկն շակ  
Հունե՛նք դրո՛ր եւ ես զանոնք ցանկցի  
Եւ անա՛ հունձմն՝ երկու ափիս սեշ պարփակ...:

Ո՛րքան ֆիչ է, եւ եթէ ձեռքս բանամ  
Գուցէ ոչ ոք ոչինչ տեսնէ, կամ զուցէ  
Միայն փոշի եւ միայն թոյր մը տարտամ  
Հոպը զտնէ ու վայրկեանին թոցրնէ...:

Շատերն երբեք չըժաղկեցան՝ քայց ոմանք  
Այդ հունե՛նքին զարեան առտու մը ծըբան,  
Եղան ուսեր ու կապեցին դրասանց  
Տունիս նակեին, ու խամբեցան այս աշեան...:

Յանցանքն ինչ է, միտիայն ի՛նչու, գիտեմ,  
Եթէ ես չեմ դընձեր հիւնս ուրիշ հունձք  
Անձնայափ քու երժարիդ կշռին դեմ  
Բայց միայն ցաւ ու ափսոսանք ու արցունք...:

Անբողջն այս է, զայն ֆեզ սիրո՛վ կ'ընծայեմ...:

Բ.

## ՀԱՅ ԱԶԳԻՆ

Գիտեալով, չա՛ւ գիտեալով որ պէտք չունիս դուն անոր՝  
Անա նորէն ես իմ անձս հոս եղերով քեզ տրի...  
Նծորդութի՛ւն նրկտի՛ն հաւատ անպէտ, անշընորհ.  
Ոտանաւորն ի՞նչ ընել, « ոտանաւորդ կ'ուտուի՞... » :

Պատանիին՝ քոյլ կուտաս. երիտասարդն՝ ինչ եւ է.  
Բայց չսփանաս, քայց մեծցած մարդն յամառի՛ տակաին  
Տողեր քաշել ու յանգեր գամել ետեւ ետեւ  
Ու կսխել վար անոնցմէ մուր կանքեղներն իր արջին... :

Ո՛չ, գիտեմ, չե՛ս ըստաներ, ըստանցի՛ր դուն երբեք  
Ուրիշ քանի քայց եթէ զաւակներուդ քեզ հաւատ  
Տառապանքին, հեծութեան, գազարումին վշտարկ... :

Ա՛ն եւ նեւէ՛, մարդակե՛ր, մոռացումի վիճն ի վար  
Այս մասնիկներն աչ արջի մ՛որ անկն օր հիւծեցաւ  
Քեզ եւ ինձգի՛նքն իր վրտայ ծանրակրօն՝ւն պատճառաւ... :

Գ.

## ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

Հողիս իմս է եւ որքան քրոյիմ յանձնել զայն այստեղ  
Անցորդներուն անծանօթ, իւրաքանչիւր էջի վրայ,  
Հողիս ի՛մս է եւ ոչ ոք պիտի անբողջ զայն ճանչնայ  
Իր լոյսերովը պայծառ, իր մըքուքնամըքը անեղ...:

Հողիս հասի մ'էկ նըման — ոսկի՞, ածո՛ւիս քէ կուպար —  
Ռուն հազի հեղեղներ ֆրֆեցին խաւը վերին,  
Մերք հրճուանի ու յանախ սեւ հեղեղները ցաւին,  
Մի՛նչ հըրարուիս մը խորունկ անոր ներքեւ կը գոռար...:

Հողիս այդ հասեմ է հիմա՛ զոր բացած եմ ու պահած  
Եւ ո՛վ զիտէ դեռ որքա՛ն այսուհետեւ նոր վիշտեր  
Պիտի պեղեն ու փորեն զանի հարուած առ հարուած...:

Հողիս ի՛մս է եւ այսօր կը մըքածեմ քէ հա՛րկ եր  
Ձայն այս չափով աչ միայն՝ անցորդներուն ճանչընել,  
Մի՛նչ կ'ուզէի ֆիշերո՛ւն անբողջովի՛ն զայն յանձնել...:

## ԸՄՐՈՍՈՒԹԻՒՆ ՍՐԲԱԶԱՆ

Օր մը յանկարծ վառեցար...  
Երկինքներէն հեռաւոր  
Ինկած կայծէ մը կարծես՝  
Օր մը յանկարծ վառեցար  
Մեր հիւղերուն ու քայլերուն մեր մէջտեղ,  
Համայնածախ ո՛վ կըրտկ,  
Ըմբոստութի՛ւն սրբազան...:

Խորշակներէն բռնութեան  
Մեր հոգիներն, որպէս խօխ,  
Զորցիւր էին ու մութին մէջ մեր բախտին  
Հիմա լուռ...մունջ կ'այրէին,  
Քեզմով փունջ-փունջ կ'այրէին,  
Ըմբոստութի՛ւն սրբազան...:

Կուար ու կապար գիշերուան  
Վըրայ ժայթքող շառափէդ  
Սարսափեցան չղջիկներն  
Ու վեր ու վար, աջ ու ձախ  
Թրթրոթիւ նետուեցան.  
Բուերն երկար վայեցին  
Ծրդեքներուն մեր վերեւ.  
Հին խրլուրդները դարձան  
Իրենց ծածուկ ծակերուն  
Ծւ աղուէսները շրւար  
Կծկըւեցան, պահուեցան

Ու գայերն իսկ կատարի  
Ընկրկեցան քու փայլէդ,  
Ըմբոսաութի՛ն սրբազան...:

Ծուխէդ կուրցան աչու՛րնեք,  
Ան երկինքն իսկ կը ծածկէք,  
Կ'ընէք աստղերն իսկ անտես...  
Անշառ բոցերդ հիմա  
Իբարու ձեռք կուտային,  
Մերթ գետերու պէս կարմիր  
Կը վազէին հողին վրայ,  
Մերթ, շատըրուտ'ն շառագոյն,  
Կը ժայթքէին դէպի վեր,  
Եւ հորիզոնը ամբողջ, մինչև հեռուն, շատ հեռուն  
Կը պատրուտէր քու թոշրատուն սուրբերէդ,  
Ըմբոսաութի՛ն սրբազան...:

Նզաւ, ս'վ հուր գեղեցիկ,  
Որ պահ մը դուն հանգեցար...  
Բայց քէչ մ'անգին կը սարսէր  
Վերտաին հողը ահա՛  
Եւ դուն, ուժգի՛ն աւելի,  
Կը պտթկայիր գետնէն դուրս,  
Կարծես գետնին ներքեւէն  
Քալած, վազած ըլլայիր,  
Կարծես բոլոր քաջերուն,  
Հերոսներուն, սուրբերուն  
Որ հոն ինկած, թաղուած են,  
Աղիքներէն, գանկերէն,  
Մէկէն միւսին անցնելով,  
Անած, մեծցա՛ծ ըլլայիր,

Կարծես ամբողջ նախահարց  
Միրար սընունդ քեզ գտնելով վառուէիր,  
Ըմբոստութի՛ւն սրբազան...:

Օհ, վերջապէս, վերջապէ՛ս...  
Նայէ՛, առտու է հիմա  
Ու փոթորիկն ահա դադրեր է արդէն...  
Մոխրացեր է մեծ զնդանն  
Ու ժըպիտ կայ սաւառնոց  
Մեր աշխարհին ամայութեանը վերև՝  
Փոխան լացին զոր չորցուցիր,  
Ըմբոստութի՛ւն սրբազան...:

Բայց մեզի պէ՛տք ես դուն դեռ.  
Դուն մընացի՛ր, բընակէ՛  
Մեր մտքերուն մէջ հիմա,  
Ըմբոստութի՛ւն սրբազան.  
Զանոնք տաքցո՛ւր, բորբոքէ՛,  
Ըբէ՛ հընոց մ'որուն մէջ  
Մերին ժանգերը հալին,  
Մեր մասնիկները բոլոր  
Իբար ձուլուին, ամբանան,  
Մետաղն ըլլայ կարծր ու ջինջ  
Եւ փալփալումն իր երգէ՛ փա՛ռքդ յաւիտեան,  
Ըմբոստութի՛ւն սրբազան...:

## ԿԵՆԴԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԵՆԻ

Կենդանութիւն Հայրենի,  
Ո՛վ դուն, մարմին եւ հոգի,  
Աւիշ անվերջ, հուբ անշէջ.  
Ո՛վ մեր Երէկն ազուալոյս  
Եւ ո՛վ, պահուած անոր մէջ,  
Գեղեցկագոյն Վաղուան յոյս...  
Ըզմեզ օտարը խոցեց,  
Խոցեցինք մենք ալ ըզմեզ,  
Պարպուկեցար երակներէն դուն մերին,  
Մարմինն հիւժած, միտքն ոգեվար  
Դուն թողուցիր ու հեռացար,  
Կենդանութիւն Հայրենի...:

Իննըսուն և հինգ — իննըսուն և վեց:  
Փայլակի նրման  
Հրդեհներ անցան  
Հայ ծեր հոգիէն.  
Ու հոգին շողաց, ու հոգին հեծեց.  
Յետոյ հանգչեցաւ՝ ցաւին հետ նորէ՛ն  
Յո՛յս մ՛ալ օրրելէն...

\* \* \*

Ինն հարիւր և ութ: Մութէն դուրս ոստում:  
Երգ, ճառ, արտասուք:  
Դրբօշակ, ծաղիկ, ծափեր անհատնում:  
Մըխիթարուա՛ծ սուգ՝  
Ցամաքի, ծովու մեռելոց վըրայ:  
«Կեցցէ» և «Անկցի»...  
«Բռնապետութիւնն անխօսալ ըլլայ»:  
«Ամենքս օսմանցի...»  
Մինչեւ որ, տակաւ,  
Հողին հանդէպաւ՝  
Յոյսին հետ նորէ՛ն  
Ցաւ մ'ալ օրրելէն...:

\* \* \*

Ինն ամիս յետոյ: Երկունք և ծընունդ:  
Արիւններու մէջ բան մը կը շարժի  
Ու կ'իյնայ անդունդ:  
Վիժում հաւատքի:  
Շըթներու վըրայ  
Կը մընայ ստոած բառ մը՝ Ասանա...:

\* \* \*

Վեց տարի յետոյ...  
Ըսէ՛ք, յետոյ ի՞նչ, յետոյ ի՞նչ սակայն...  
Ամայի ու ծանր ու լուռ երեկոյ՝  
Հայ հողին, հողւոյն, կեանքին վրայ համայն...  
Փոթորիկ մ'ահեղ  
Անցեր ու քըշեր է իր առջեւէն  
Ամէն բան, ամէ՛ն...  
Զրկան ո՛չ արեւ, ո՛չ հայեր այնտեղ...  
Բայց հեռուն, հեռո՛ւն, ահա կը ճըշեն  
Շուքեր մահադող.  
Հեռո՛ւն, հեռացող  
Զանգուածները հո՛ծ  
Տակաւ կը հալին.  
Հեռուն՝ ծուխ ու բոց.  
Հեռուն՝ անդունդներ յառած երկնքին  
Եւ հեռո՛ւն, ո՛վ Տէր,  
Դեռ յոյսի՛ կայծեր:

\* \* \*

Եւ օր մ'ալ յանկարծ  
Շեփորը դռաց  
Ու կրմախօք սիրտեր, կրմախօք մարմիններ,  
Ստուեր առ ստուեր  
Հաւաքուած, եկած միատեղ նորէն՝  
Կեանքին, արեւին աչք, ձե՛ռք կ'երկաբեն...  
...Ու նաւ մ'ահա կը ծըփայ,  
Կը ծփծըփայ ծովուն վրայ,

Կ'երթայ հետու, կուզայ մօտ  
Առազաստոյն արեւոտ.  
Մերթ կը մեծնայ՝ հորիզանն  
Ամբողջ աշքէ ծածկելով,  
Կը պահուրտի մերթ ալ հոն՝  
Ու կ'ելլէ դուրս նազանքով.  
Կը կարգացուի նաւուն վրան  
«Անկախութիւն Հայկական»:

...Սակայն չըկայ նաւը ա՛լ...  
Ընդհարեցաւ խարակներու  
Կամ նաւերու մէջ երկու  
(Երէկ օրհնեալ, այժմ անխօսալ)  
Ճգմըւեցաւ, փշրեցաւ...  
Անկախութիւն Հայկական,  
Երազն էր ան՝ սուղուեցա՛ւ,  
Թողով թեկա՛ր մը միայն...:

Կենդանութիւն Հայրենի,  
Ո՛վ դուն, մարմին եւ հոգի,  
Աւիշ անվերջ, հուր անշէջ,  
Դուն հոն էիր՝ նաւուն մէջ  
Եւ դուն... թրոտ՛ր անկէ դուրս,  
Եւ դուն հիմա՛ իմ հողոյս,  
Հազարներո՛ւ հողոյն մէջ,  
— Հողոյն, ստքին, մարմինին, —  
Հեծեծագին, հրեռազին  
Աշխատելով գաղտնօրէն՝  
Փիշեր-ցերեկ, լաստ առ լաստ,  
Կը շինես նաւը նորէն.  
Կ'ընես Վաղուա՛ն զայն պատրաստ...:

## ԳԵՂՕՆ ԼԱՅ ՈՐԲԻՆ

Մօրըդ գիրկէն դեռ նոր իջած,  
Դեռ նոր քայել կը սորվէիր՝  
Երբոր աշխարհ, երբոր Աստուած  
Քու աչքերուդ հետաքրքիր  
Եւ նորազարթ մտքիդ զիմաց  
Հանեցին ծո՛ւ վ՛ մ'որուն վըրայ,  
Կուտած, կարմիր, մէկ քով ծըռած,  
Տեսար օրը՛ցդ որ կը լողայ...:

Մայրդ էր անոր ուժգին կառչեր  
Եւ անոր հետ կ'երթա՛ր հեռու...  
Մամըդ՝ դէմքին ժրպիտ մ'ունէր,  
Սառած ժրպիտն յիմարներու...  
Քոյրերդ ամբողջ փեթըտըտած  
Վարդեր էին շուրին վըրայ...  
Եւ հօրդ աչքերն էին դեռ բաց,  
Բայց քեզ չէի՛ն տեսներ հիմա...:

Դուն հոն էիր ու չէի՛ր հոն.  
Քեզ իրարու յաջորդաբար  
Կ'անցընէին սուսերայօն  
Սեւ ճիւղաներ...: Կ'առաջանար  
Միտքըդ ամպի մը ընդմէջէն՝  
Կըտըտըտած փայլակներով,  
Եւ կը հալէ՛ր միւռօնդ արդէն՝  
Փոթորկին մէջ արիւնահոով...:

Տարիներ վերջ քեզ ժողկեցին  
Միրանեչոզ այգի մը մէջ...  
Ժանգովըդ նոր, փայլովըդ հին,  
Խորաններուն համար անշէջ  
Ձերթ կորսուած կրտոր ոսկին՝  
Քեզ ժողկեցին անկիւններէ...  
Մտքէդ հողեր կը թափէին  
Ու կ'աճէի՛ր ամէն բողէ...:

Մարդիկ, սակաֆն, այսօր ինչո՞ւ  
Կը նային քեզ ու չեն յիշեր  
Թէ նրման չե՛ս ուրիշներու,  
Թէ աչքերդ են հողատուներ՝  
Լեցուն անուշ գիակներով,  
Որ կը շարժին՝ հրը կը տեսնես  
Տըզաք իրենց հայրերուն քով  
Ու մօր գիրկե՛ր՝ հրբաշքի պէս...:

Մարդիկ, այսօր, կը նային քեզ՝  
Ու կ'սպասեն որ շուտ մեծնաս.  
Դէմքդ ու հոգիդ զըժոխակէզ՝  
Մարդիկ մոռնա՛լ կ'ուզեն, արդա՛ս...  
Մարդիկ, այո՛... բայց անոնց դուն  
Ներէ՛ ու միշտ գիտցի՛ր հիմա  
Թէ մինակ չես, թէ օրն ի բուն  
Կ'աւելնայ մէջդ ու կը յուսայ  
Քեզ փաթթըւած կարօտագին՝  
Մընողներուդ միսն ու հոգին...  
— Դո՛ւն միաֆն լա՛ւ մեծցի՛ր, արդա՛յ...:

### ՈՐԲԵՐՈՒՆ ՁԵՌՔԵՐԸ


Ս'ելլէ ճտճանչ մը կարծես այս անհամար ձեռքերէն ,  
 Ձեռքե՛ր՝ մեծցած մինակնին. ոչ շատ. դեռ թոյլ, դեռ անմեղ,  
 Դեռ ոչ սքի չըխառնած կամ չըխրզած վատօրէն  
 Բախտին թնլերը՝ ձեռքեր. սիրակարօտ, սիրազն'դ

Ձեռքեր՝ հաղիւ թէ յիշող ջերմութիւնն հօր մը ափին  
 Որ զոյզն իրենց կը պատէր՝ երբոր թաթիկ էին դեռ...  
 Տախտակներու վըբայ չոր, ձեղուններու տակ ցրտին  
 Հիմա սառող քովէ քով՝ հայ որբերու ս'ըր ձեռքեր...:

Անոնք երբեմն յանկարծ կը խըլըրտին դաղտնապէս,  
 Անոնք բրուանցք կ'ըլլան մերթ, կը դարնուին իրարու,  
 Կ'ըլլան գրօշակ, կը բացուին յաղթանակին վազելու:

Կը խըլեն գիրքը անոնք, կատաղօրէն, հացի պէս.  
 Մարդոց սճիբը զանոնք զերդ մէյ մէկ սուր է դարբնած.  
 Ա՛հ, գօրացո՛ւր, կարծբացո՛ւր, մեծցո՛ւր զանոնք, կա՛րծր Աստուած:

1923



11  
 53490

## ԳՈՐՑՈՒ ՈՐԲԵՐՈՒ

Պորֆո՛ւ, հըմայքիդ օղակին մէջ դիս  
Բոնե՛ր կը տանիս.

Ջուրերու վրայ նետուած դուն պարտէ՛զ,  
Սիրաբա ծըփանքիդ հետ կ'օրբես, կ'օրբե՛ս....

Ալիքներն ի՛նչքան քեզ շոյեր, պազեր,  
Շիներ են խորշեր

Եզերքներուդ մէջ... Անոնց անձնատուր՝  
Ի՛նչպէս մընացեր ես թարմ ու մաքուր....

Հովիտներէդ վար ու բլուրներուդ  
Կողերէն ժեռուտ՝

Որքա՛ն ձիթենիք, բաց բազուկներով,  
Հեզ, խաղաղասփի՛ւտ՝ կ'իջնեն մինչեւ ծով....

Հո՞ժ նարընջենիքդ՝ հոտուէտ ըստուեր,  
Կը ծածկեն դաշտեր...

Մինչ ըլլար կարծես մութ երկինքդ ալ ջինջ  
Մեծ նարընջենի մ'աստղերով նարինջ....

\* \* \*

...Ի՞նչ լաւ էր, Գորֆո՛ւ, գրկիդ մէջ մոռնալ  
Ներկայ եւ անցեալ.

Կապոյտիդ ներքեւ, կապոյտիդ վերեւ,  
Ըլլալ ինչպէս թուի մ'անշարժ ու թեթեւ....

Բայց աչքեր ահա՛, անձկոտ, վշտագին՝  
Կ'այրին, կը մարին...

Ես մոռցե՛ր էի՝ թէ զրժոխք մ'ալ ցաւ  
Ծովը մինչեւ հոս քըշեց ու բերաւ....

...Գորֆո՛ւ, հրմայքիդ օղակը յանկարծ  
Կը գտնեմ կոտրած...

Ջուրերու վըրայ նետուած օրօրո՛ց,  
Օրբէ՛ գուն, օրբէ՛ սիրտերն հայ տըղոց....

## ՈՐԲԵՐՈՒՆ ԱՂՕԹՔԸ

Սմենամութ, ամենախոր անդունդէն՝  
Ուր մենք ինկանք ու կը մընանք դողահար,  
Կը բարձրանան ահա անգամ մ'ալ նորէն  
Մենէ ի քեզ . ո՛վ դուն, Երկի'նք բարերար .

Յոյսի սիւներ՝ ինչպէս սիւներ ալ լոյսի,  
Որ չըփրլչիս ու չըսենա՛ս վերջնապէս,  
Որ միշտ Աստուած մ'ամպերուդ մէջը խօսի,  
Որ երբ մեռնինք՝ քու ծոցիդ մէջ մեզ առնես :

Ո՛վ բարձրութիւն, պայծառութիւն իտէալ,  
Կ'ուզենք քեզի մեր սիրտն ու միտքը ուղղել  
Ու այդ ճամբով փախիլ վիհէն այս անել :

Երկի'նք, կ'ուզենք քեզ մեր վերեւ ունենալ՝  
Զի հոգ կ'ըսուի թէ մեր ծնողները կ'ապրին  
Ու մենք կարօ՛տն ունինք անոնց ժրպիտին... :

## ՈՐԲ - ԻՇԽԱՆ

Պե՛ն տասնընթեք տարու,  
Ու դէմքն է դե՛ն մանկական,  
Նայուածքը՝ շինջ ու աղու,  
Բայց խորշոմներ ճակտին կան,

Ձայնն ըստուերոտ է ու թաւ՝  
Նրման հովոտ անտառի  
Կամ կոհակի մ'որ տակաւ  
Մօտենալով կը պայթի՛:

Եւ բընական ա՛յնչափ շնորհ,  
Տըխրութեան հետ բընական՝  
Ձեւին, շեշտին մէջ անոր  
Կը ծածկըւին, կը շողան,

Որ ըսպանեալ իշխանի  
Մը վերջին ճետն է՝ կ'ըսես,  
Հայածական, անօթի՝  
Բայց միշտ տոհմիկ, բայց միշտ վէս....

Եւ երբ՝ օ՛րպրո՛ց դըրէք զիս  
Կ'ըսէ ուժով, տիրօրէն,  
Կը պահանջէ՛ կը խորհիս,  
Որ տան մակա՛նը իրեն....

## ՄՈՒԹ ԺԱՄԵՐ

Ա.

Ուրեմն ի զո՛ւր էր որ Գեղ մեր մանկութեան առաջին  
Արևններէն ըսկըսեալ մեր սրտին վըրայ սեղմեցինք,  
Գեղ սընուցինք յորդառատ ուժեղ կաթո՞վն անուրջին  
Եւ քեզ համար դըժոխքին հետ կըռեցինք մենք դաշինք...

Դըժոխք մեր կեանքը ըրինք՝ որ դուն դըրախտ մը ըլլաս,  
Ո՛վ Հայրենիք, անդունդին և երկընքին մէջ առկախ  
Յընորական օրորո՛ց, փառարանեալ պատուհա՛ս,  
Հո՛ւր՝ տաքցընող մեր հոգին, տո՛ւն՝ յաւիտեան ըոցածախ...

Քանի՛ անգամ երկինքէն անդունդ՝ իջաւ ծիածան  
Ու անդունդէն վեր երկի՛նք երկընցաւ սիւն մը հսկայ  
Ու մենք անդու՛լ, անվըհատ մագըլցեցանք անոնց վըրայ...

Քանի՛ անգամ... եւ սակայն անոնք փըլան ու ինկան,  
Ու մենք անոնց փաթթըւած՝ բարձունքներէն ինկանք վար  
Ու այս մարզանքը ահեղ ըզմեղ թողուց ողե՛վար...

## ՄՈՒԹ ԺԱՄԵՐ

Բ.

Ո՛վ Հայրենիք, կ'երազէի ես երկա՛ր՝  
Քեզ յիշելով, յուսալով...  
Հիմա նորէն քեզմով իմ սիրտս է խըռով,  
Բայց երազել չեմ կրնար...:

Կը փայլէիր, կ'ազուարնայիր, օ՛հ, ո՛րքան,  
Արեւին մէջ երազիս...  
Հիմա մօտս ես ու ինծի դուն կ'երեւիս  
Լոյս ու շուքովդ իրական...:

Բայց ի՞նչ ցաւ է, գիտե՞ս թէ ի՞նչ խորունկ ցաւ՝  
Քեզի նայած միշտ ըլլալ  
Իբր անթառամ աստուածատունի ծառ մ'օրհնեալ

Սև յանկարծ օր մը գիտակցիլ՝ թէ բընաւ  
Պիտի այլեւս չըկրնաս  
Բանալ թրթուռն կանաչ խորհո՛ւրդդ իմ վրբաս...:

## ՄՈՒԹ ԺԱՄԵՐ

Գ.

Մընած օրէս մինչև այժմ իմ հայրենիքըս ինձ հետ  
Տարի ամէն տեղ, ամէն, աստղ մը ինչպէս կը տանի՝  
Զահանդական, անվախճան իր պրտոյտին մէջ երկնի՝  
Արեւային դրբութիւնն որուն ինք մասն է յաւէտ...

Նորէն ու միշտ զիս կապուած կ'զգամ անոր՝ բայց այնպէս  
Ինչպէս կոտորած ու բունէն վար կախուած ճիւղ մ'իւր ծառին...  
Երբեքն յոյսի թռչուններ հոն դեռ կուզան կը թառին՝  
Սակայն վերջէն աւելի՛ կը շորնայ ճիւղը կարծես...

Իմ հայրենիքս, ա՛հ, ինչպէ՛ս դաւեց ինձի, խաբեց զիս...  
Կը պահանջե՛մ մերթ իրմէ հաշիւն անհուն իմ սիրոյս,  
Իմ կորովիս վատնըւած, իմ խորտակուած երազիս,

Ու մերթ՝ ձեռքերս երեսիս՝ կուլամ լացով մը անյոյս,  
Պաղատելով որ ապրի՛, հոգ չէ թէ զիս մեռցուց ան  
Եւ իր անուշ մանուկնե՛րը երջանիկ լոկ ըլլան...

## ՄՈՒԹ ԺԱՄԵՐ

Դ.

Փետրրվարի օր մ'է արեւ-արեգակ.  
Յետ-միջօրէն կարծես գարնան է արգէն.  
Ծովը կապոյտ՝ կանգնած կապոյտ երկնից տակ.  
Ձեփիւռներ դուրս թռած լերան ծերպերէն...:

Կը խողրտայ գիւղի ճամբան՝ դեռ լեցուն  
Նգերքներուն վրայ անկոխ ձիւներով...  
Մրդածառեր կը կենան մերկ, սարսրուն՝  
Ըսպասումովն հին հրաշքին ապահով...:

Ու անգրագարձ՝ կ'ըսեմ.- Շունչերն այս տաքուկ  
Ծառե՛ր, չըլլայ որ ձեզ մատնեն շրւարման  
Եւ կանխահաս ձեզի ծաղիկ բանալ տան...:

Դեռ չէ՛ գարուն. դեռ կա՞ն պահուած ցուրտ ու բուք...  
Զորցա՞ն յոյսի մեր բողբոջներն անհամբեր.  
Մենք խաբուեցանք, դուք չըխաբուի՛ք, ո՛վ ծառեր...:

## ՄՈՒԹ ԺԱՄԵՐ

Ե.

Նորէն դուն ես, ս'վ Պոլիս, երկար, երկա՛ր քրդանցքներ՝  
Կընսի՛ մը շատ ցանկալի, ընկողմանած յուլարար...  
Եւ դուռիդ դէմ նորէն ե՛ս՝ զոր ներս անգամ չես տաներ,  
Զոր կը պատժես՝ գուցէ շա՛տ քեզ սիրելուն իսկ համար:

Ու կը նայի՛մ ես ծովէն՝ երազամոյն աչքերով,  
Բըլուրներուդ կորուսեան և ձորերուդ՝ որ հիմա  
Նորէն լեցուն են, գիտեմ՝ մեծ օձերով՝ որոնց քով  
Անհոգօրէն դուն հովին բացեր ես կուրծքըդ ահա...:

Դո՛ւն՝ այնքա՛ն քաղցր ու այնքա՛ն փափուկ հողեր, ծով, երկինք:  
Ինչպէ՛ս կընաս հանդուրժել իբր հըպուսին, ս'վ Պոլիս,  
Եւ դահիճին հետ կընաս կապել սիրոյ նոր դաշինք...:

Ահ, չե՛ս յիշեր թէ ի՛նչպէս վըրադ գողաց իմ հողիս,  
Թէ գգուեցիր դուն ալ զիս... եւ, տարփո՛վառ դուն մօրու՛  
Հիմա միայն ըզբողած ես քու գօտիդ քակելու,

Կապոյտ գօտի՛դ Վոսփորի, ծոցիդ տակ՝ դէ՛ղ վարդերու...:

## ՄՈՒԹ ԺԱՄԵՐ

2.

Ծով ու երկինք՝ կատաղած, ու ես՝ վըրա՛ն այդ ծովուն...  
Ծովը կ'ուզէ սունածայն նետուիլ երկինքը մինչեւ.  
Կ'ուզէ երկինքն ալ խուժել ծովուն վըրայ՝ ցած ու սեւ  
Իր ամպերով յորդազեղ ու շանթերով շառաչուն...:

Ու կը համրեմ կայծակներն՝ ինկող շուտ-շուտ ու շատ մօտ...  
Անոնք անվերջ՝ հըրտփայլ դժոխքի դուռ մը կարծես  
Մութին վըրայ կը բանտն ու կը գոցեն ուժգնապէս,  
Այս կեղծ գիշերը կ'ընեն մերթ ընդ մերթ կեղծ առուօտ...:

Եւ կը դէտեմ՝ առանձին կամըջակին վրայ կեցած,  
Սարսուռով բայց լեցուն ու բախտութեամբ մ'անաւոր,  
Գոհ՝ երկնքի ցատումէն և սրտակիցը անոր...:

Շա՛խ...: Ճարճատում մ'ալ շանթիս Ու կը տենչամ իբր Աստուած  
չըբամայնի որ իմայ ան աշխարհի վրայ ամբողջ,  
Այլէ՛ք բոլոր երկիրներն ու չըթողո՛ւ ազգ մը որջ...:

## ՄՈՒԹ ԺԱՄԵՐ

Է.

Անդունդի մէջ ինկած Ա՛զգ,  
Ելար եզերքն անդունդին՝  
Ուր փուշ, եղիճ ու տատասկ  
Բազուկներուդ կը կառչին  
Եւ կ'արիւնի՛ս վերբտփն...:

Անդունդին մէջ հեղձամահ՝  
Բաց օդին նոր հասած դուն,  
Ահա հեղեղն ու անա՛  
Խուժումն ամէն հովերուն  
Կայծիդ վըրայ մարմըրուն...:

Ո՛վ դժբախտ Ազգ, կարծեցի՛ր  
Թէ կ'սպասեն յառնումիդ,  
Թէ հոգիներ կարեկիր  
Պիտի լըւան շիթ առ շիթ  
Սիրով, գուժով քու հոգիդ:

Մինչ կը թողուն քեզ մինակ,  
Մինակ՝ եզերքն անդունդին,  
Տարբերուն դէմ բովանդակ,  
Ոտիներուդ դիմաց հին  
Նորէն կուրի՛լ ողբագին...:

Ու փուշերէն աւելի,  
Ու խորշակէն ու ամէն  
Գազաններէն անելի,  
Կը տառապիս այս ցաւէն՝  
Թէ պէտք չէի՛ր աշխարհի...:

## ՄՈՒԹ ԺԱՄԵՐ

Ը.

Մարդի՛կ, ձեզի կը խորհիմ, ձըմեռը ձեր երդիքին,  
Ամառը ձեր երկինքին տակ աշխատող, երազող.  
Ձեր աշխարհին հողէն հող, ձեր աշխարհին նրման հին՝  
կը բուսնէիք հոն թաղուած արմատներէն դարասքող...

Տարածութեան վրայ անոր ամենուրե՛ք էիք դուք՝  
Ոսկորներովը ձեր հարց և ձեր ճակատին քրտինքով  
Անոր կապուած ու փակած...: Ձեր հիւղերուն մէջ անշուք  
կը պղպլջար յուշերու կաթսան յոյսի սանին քով...:

Մարդի՛կ, ձեզի կը խորհիմ...: Ձեզմէ հեռու, շատ հեռու՝  
կապուած էի ես ալ ձեզ, ձեզմով՝ դետնի մը կարմիր...  
Արմատախիլ հիմա դուք՝ կ'զգամ հիւթէն դարերու  
Իմ պարպըւիլս ալ հիմա ու չե՛մ այլեւս նորոգուիլ...:

## ՄՈՒՅԹ ԺԱՄԵՐ

Թ.

Այս ընդարձակ հողին վրբայ  
Գայի՞ն տեղեր որ մերն էին,  
Քէեւ չէի՞ն. երազային՝  
Ոմանց համար ու սպագ՛ալ,  
Այլոց՝ անցեա՛լ կախարդական  
Որ օր ժ՛րլլա՛ր պիտի գարձեալ,  
Եւ շատերուն որ հոն ծընան՝  
Ներկա՛յ, օրհնեա՛լ ու անիծեա՛լ...:

Ոմանք մարմնով, ոմանք մտքով .  
Գը շնչէին, կ՛սպրէին հոն,  
Նախկին ու նոր՝ իրարու քով,  
Իբարու հեա՝ ծաղիկ, կոկոն.  
Բաւն՝ ստտերով. սստ ու տերեւ՝  
Մերթ իբարու կարծես անկասկ  
Բայց իբարու ներքեւ, վերեւ՝  
Իսկոյն, երբ հով մը կուտար թափ...:

Կային տեղեր այս հողին վըրայ՝  
Որ մերն էին, թէեւ չէին.  
Անցեալ, ներկայ ու ապագայ՝  
Որոնց փակած էր մեր հողին  
Արմատներով իր անհամար  
Եւ որոնցմէ կ'անցնէին մեզ,  
Ներխուժումով մը յամբ, յամառ,  
Հիւթեր, յոյզեր, ուժեր անտես...

Ո՛վ Տէր, ի՞նչպէս հիմա յանկարծ,  
Աւելի խոր հոն մխուելէ,  
Հոն ըզգալէ ետք մեզ անդարձ՝  
Կը խլուինք, դուրս կ'իյնանք հոնկէ,  
Մեր արմատներն յանձնած օդին  
Ու ծաղիկները մեր բուրբ  
Հիմա խամրած, ինկած գետին...  
Շատ չէ՞, ո՛վ Տէր, տանջանքն այս խոր՝  
Մեր խեղճ ազգին, իր խեղճ սրտին...

## ԵԿԵՍՑԷ

Ահա՛ հոգի անհուն՝  
Այս մութուն, մութուն...  
Հավուն վո՛ւն ու վո՛ւն՝  
Հաս մօտն ու հեռուն...:

Հավուն աւազէն  
Ցայգն ի բուն արթուն՝  
Այս մութուն, մութուն  
Շուներ կը հաջնն...:

Հավուն հարուածէն  
Խելառ ու մուրք՝  
Ահա՛ անդադար  
Փեղկեր կը հեծեն...:

Հավուն վո՛ւն ու վո՛ւն  
Հաս մօտն ու հեռուն...:

Սև հավուն ծեծէն  
Պարտասուն, նրկուն՝  
Ահա՛ ծառերուն  
Իբրք գրկելէն,  
Ի յնալ-նլլելէն՝  
Ահա՛ ծառերուն  
Այս մութուն, մութուն  
Ծրդած Ծկեսցէն.

— «Յկեսցէ՛, ո՛վ Տէր,  
Ձինջ կապոյտ եթեր...  
Յկեսցէ՛ արեւ  
Մեր զխուն վերեւ...  
Եւ թռչնոց երգե՛ր,  
Եւ թեթեւ սիւզե՛ր,  
Եւ խաղաղութի՛ւն  
Աշխարհի համբուն  
Յկեսցէ՛, ո՛վ Տէր... »

Հովուն վո՛ւն ու վո՞ւն  
Հոս մօտն ու հեռուն... »

1923, Աթէնք

## ՈՎ ՀԱՅԱՍՏԱՆ

Ո՛վ Հայաստան, որ կարկանդակ առջեւ միշտ,  
Միշտ ու միա՛յն կը հիւսես... ,  
Կ'զմայլէի քեզի ես՝  
Քեզ զանելով ճակատագրին թէ՛ նաժիշտ  
Թէ՛ տիրուհի, ան քեզ խարոզ ու դուն զայն,  
Գուն շինելու, ան քակելու  
Ձեր մեծ ճիգին մէջ ունայն...  
Ան՝ ըստուերն ահարկու  
Անգամ մը եւս կը մօտենայ կոնակէդ  
Սէ քու կըտաւրդ կեանքի,  
Յըտադախա՛նն, անձկալի,  
Իբ հովին տակ կ'ընէ անգամ մ'ալ անհետ... :

Ո՛վ Հայաստան, կը մընաս  
Գուն պահ մը լուռ ու շա՛տ տրխուր: Սէ յետոյ  
Կը փնտրուես՝ մըտախո՛հ,  
Քեզ հալածող ոգին անտես ու անհաս...

Յետոյ, յոգնած դէմքէդ վար  
Կ'իյնայ կաթիլ մը արցունք  
Նւ հանելով կուրծքէդ հառաչ մը խորունկ՝  
Բու թելերուդ մէջ երկար  
Դուն յամբապէս  
Ձեռքդ նորէն կը մըխըրճես....

— Բայց ո՛չ այլեւս.... Ո՛չ, կեցի՛ր՝  
Դուն չըհիւսես պիտի ա՛լ՝  
Ո՛չ, բուսկան է ողբալ  
Ձանքին, յոյսին վրայ պատիր՝  
Կտարէ՛ կարկահդ, ո՛վ յիմար՝  
Կըտորնեբոյն անոր զինուէ՛ խօյաբար.  
Ձա՛րկ եւ փլցո՛ւր. զա՛րկ, հարուածէ՛ ու քանդէ՛  
Նւ փլատակաց դէզին տակ դո՛ւն ալ թաղուէ՛....

Բայց՝ կը սոսկա՛մ արձագանդէն իմ ձայնիս...  
Բայց՝ մի՛, դուն մի՛ լըսեր զիս  
Նւ յաւիտեան ըրէ ա՛յնպէ՛ս  
Ինչպէ՛ս գիտես....

## ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ

Եկեղեցին Հայկական ժընընդավայրն է հողույս՝  
Ինչպէս քարայր մ'ընդարձակ, պարզ ու խորունկ, մութ ու լոյս,  
Իր գաւթթոփն հիւրընկալ, իր լայն բեմով ու հեռուն  
Կանգնած իր լուռ խորանով՝ որ կարծես նաև մ'է ծրփուն...:

Եկեղեցին Հայկական ես աչքըս գոց կը տեսնեմ  
Ու կը շնչեմ, կը լրսեմ՝ իր Յիսուսով մանկադէմ,  
Իր սեղանէն մըխացող քուլայ-քուլայ խունկերով  
Եւ իր պատերը ցնցող աղօթքներով ալեխուով...:

Եկեղեցին Հայկական բարձր բերդն է հաւատքին  
Իմ պապերուս՝ որ հողէն դայն քար առ քար հանեցին  
Ու երկինքէն իջուցին դայն ցօղ առ ցօղ, ամպ առ ամպ,  
Ու թաղուեցան անոր մէջ հանդարտութեամբ, հեղութեամբ...:

Եկեղեցին Հայկական մեծ վարագոյր մ'է բանուած,  
Որուն ետեւ սրկիհին մէջ կ'իջնէ ինքը Աստուած,  
Որուն առջեւ գլխահակ կուգայ իմ ազգըս ամբողջ  
Հաղորդութիւն անցեալին հաց ու գինւով կենսառողջ:

Եկեղեցին Հայկական՝ ծովուն դիմաց ալեկոծ  
Նաւահանգիստ մ'է խաղաղ. ցուրտ գիշերին՝ հուր եւ բոց,  
Ու տօթակէզ ցերեկին՝ անտառ մըն է ըստուերոտ,  
Ուր շուշաններ կը ծաղկին՝ Շարականի գետին մօտ...:

Եկեղեցին Հայկական՝ մէն մի քարին տակ գեանի,  
Դէպի երկինք բարձրացող գաղտնի ճամբայ մը ունի...:  
Եկեղեցին Հայկական հայ հոգիին եւ մարմնոյն  
Զըբտհանդերձն է փայլուն, մինչ իր խաչերն են դաշոյն

Եւ զանգակներն են բամբուլն եւ երգն է մի՛շտ յաղթութիւն...:

## Ս. ԿԱՐԱՊԵՏ ԿԵՍԱՐԻՈՅ

Բըլուր բլրի հտեւէ: Հոս սարահարթ մ'է հիմա:  
Ձիւնը ծածկեր է շորս դին: Լեռը ախտեղ կ'երեւայ,  
Այնքան մօտիկ՝ որ կարծես թեւատարած ու ներկայ,  
Կը հսկէ մի՛շտ այս երկրին, այս երկրնքին ալ վըրայ...:

Կառքէն իջեր կը քալեմ: Ձիերն յոգնած կը հեւան:  
Ու դեռ վերելք մը կայ հոն ու խորտուփորտ է ճամբան:  
Ամայութեան վրայ ձիւնին կ'իջնէ խորհուրդն իրիկուան...:  
Կը զարնեմ ստքս գետին. ողիք, ելէ՛ք երեւան...:

Դէմը, հեռուն տակաւին, բլրակի մը կողմ ի վեր,  
Վանքն է յանկարծ. - հին ու նոր, սե ու կարմիր տանիքներ.  
Մէջքին՝ պարիսպ մը երկար, ներսը զմբէթ մ'օբնարներ,  
Որուն ներքեւ դարհրով նախնիքս ուխտի են եկեր...:

Դուք, իմ նախնի՛քս, որ եղաք ճշմարտիս բողբ նախկին,  
Դուք որ նոր հարս, նոր փեսայ, կամ չափահաս այր ու կին  
Անցաք հոսկէ, ըզգացի՞ք խորը ձեր լոյս հաւատքին  
Իմ ըստուերիս խրրբտու՞մն ու յարութիւնն հոս կրկին:

Իմ մէջըս դ՛ւք էք հիմա. ես բազմութիւն մ'եմ այսօր,  
Որ հաւաքուած դարերէն՝ շղթայաշար ու հրզօր,  
Կը մտնենայ քայլ առ քայլ, առանձին ի՛նքը թափօր,  
Նոյն տեղերուն, նոյն սուրբին, նոյն Աստուծոյն ուխտաւոր:

...Կատրը կ'իջնէ ձորին մէջ, յետոյ կ'ելլէ վեր նորէն.  
Ու կը հասնի՛նք վերջապէս...: Կը մտնեմ ներս տաճարէն.  
Ներս կը մտնեն ինծի հեա՛ խաչ հանելով հեզօրէն,  
Ահա անո՛նք ալ ամբողջ ու հետըս ծունկ կը շքեն...:

## ՆՕՏ ԵՒ ՆՈՎԼԻՒ

Ա.

Հովիւն իր հօտին զժտե՛ր է կարծես.  
Ինչեք է հօտին մէջ ախտ մ'ահաւոր.  
Ջաքնըւեք, զարկե՛ր՝ հօտն եղեք է կէս...

Ժողովուրդդ, ո՛վ Տէր, ինչպէ՛ս էր հրգօր՝  
Ծըբ ունէր իր հետ Հաւատքին, Յոյսին,  
Ծըբորդեալ Սիրով սուրբ եռածանին...

Այժմ անբանացեք, այստեք է ան.  
Կը հայհոյէ Քեզ եւ ինքզինքին ալ,  
Կը փրսխէ արիւն եւ չի՞ կրնար լալ...

Կը քաւէ պատիժն իր մոլորութեան.  
Պարպուած ուժէն, կը քելով տակաւ՝  
Ան կ'իյնայ գետին, կը մեռնի, մեռա՛լ...

Ո՛չ. ան կը զղջայ... Աչքերէն կ'իյնան  
Շէթեք կապարի... Ժողովուրդդ, ո՛վ Տէր,  
Տե՛ս, Քեզի կ'ուզէ կոտորած դաստակներ...

Բ.

Ծրփացող, հեծող շուքերուն մէջէն՝  
Շուք մը քիչ առ քիչ կը կանգնի ահա  
Եւ կուրծք, եւ թեւեր, եւ գլուխ կ'ըլլայ...

Եւ ոմանք անո՛ր կը դառնան արդէն՝  
Զայն թուք ու մուրով ծածկելու համար,  
Ոմանք կը դիտեն զայն լուռ, դողահար...

Վէրքն հսկայ ամբողջ այս թշուառ հօտին,  
Իր սրտին մէջն ալ բանելէ յետոյ՝  
Հոն չորցեր, փոխուե՛ր է կա՛րծըր սիրոյ...

Ձեռքին՝ մտբակներ կարծես կ'ոլորուին՝  
Հրբամանն իր մէջ կ'ուռի անհամբեր.  
Կը ցնցեն հողին զսպրւած շանթեր...

Կը նստի՛ գիշերն ու անդօրէն  
Զատուած՝ ան կ'երթայ, ամբոխէն հեռու,  
Մենութեան սառին մէջ թաթխըւելու...

Եւ մինչ վարը խոր ժրխոր է նորէն՝  
Մն լո՛ւռ կը կարդայ, մութին կըռթընած,  
Ոսօքն աստեղագիր զոր գրեց Աստուած...

Գ.

« — Արթընցէ՛ք, փառք իմ... եւ դուք ալ, խեղճե՛ր,  
Որ նոր փառքն ի ձեզ կը կըրէք յանդէտս,  
Ժամ է, արթնցէ՛ք եւ քայնցէ՛ք հետս...

« Ո՛վ ձեռնէ, ըսէ՛ք, հսն ըլլալ շուղեր՝  
Ուր արշալոյսին մէջէն ամէն օր  
Վարձք մը կ'իյնայ վար՝ խոստման մը հետ նոր...

« Թողուցէ՛ք բոլոր բեռներն աւելորդ.  
Գօտին եւ գործին նախահայրերուն  
Թող միայն ձերին մախաղը լրնուան...

« Կը տեսնէ՞ք հեռուն Ամպը առաջնորդ,  
Որ դանդաղ ու վեհ՝ կը շարժի արզէն  
Գէպի ապագան, եկած անցեալէն...

« Մն անդր, կոյրերուն դաւազան եղէ՛ք՝  
Գրկեցէ՛ք ծերերն, հաշմերն ալ ամբողջ.  
Թ՛մզ հոս չըմբնայ միակ շունչ մը ողջ...»

...Սւ ահա՛ ամբոխն, ոգեսպառ երէկ,  
Կը շարժի տակաւ, կուգայ քովէ քով՝  
Փօխն ի փոխ Մարդուն, Ամպին նայելով...»

Կ'ազդըւին վիզերն ու ամէն հասակ  
Կը մեծնայ՝ կարծես. ամէն հողիէ  
Փրկութեան խորունկ հառաչ մը կ'ելլէ...

Սւ անապատի ճամբէն ըսպիտակ,  
Նըման յորդասփիւռ դետի մը հիմա՛  
Հօտն, ալիք-ալիք, յառա՛ջ կը խաղայ...

## ՀԱՅ ՀՈԳԻԻՆՆ

Թօթուած, ինչպէս, ցուրտն ու ձրմեռն այսօրուան՝  
Ես կը խորհիմ առաւօտուն այն գարնան՝  
Ուր հին կոճղէն նոր բողբոջներ պայթեցան:

Ես կը խորհիմ թոնուբոնին գետնին տակ,  
Որուն մէջէն խուժեց աւիշն անառակ  
Եւ բարձրացա՛ւ եւ սարսուացո՛ւց ծառն համակ:

Ես կը խորհիմ ճնճղուկներու ճըւոցին,  
Սոխահներու դալլալներուն ցայգային՝  
Որ անվընաստ անոր գարթու՞նն ոգեցին:

Հեղեղներո՛ւն, կայծակներո՛ւն անհամար  
Ես կը խորհիմ, որ իր գարթմանը համար  
Արմատներուն քրքրեցին հողը խաւար:

Եւ միշտ ու մի՛շտ՝ իր բունին գորշ մսխիբէն  
Հըրափայլող այն կայծերուն ծաղկեղէն  
Ես կը խորհիմ՝ որ հողիիս դեռ լոյսն են:

Եւ այդ լոյսին, այդ յոյսի՛ն մէջ կը տեսնեմ,  
Բացուած ընդդէմ ովկէանին ժանտաղէմ,  
Հայ հողիին հողմակոծ ծա՛ւր վրսեմ...

## ԽՕՍՔ ՄԵՌԵԼՈՑ

Մեր մեռելները կ'ըսեն  
Հողին տակէն, երեսէն՝  
Իրենց թաղուած, կիսաթաղ,  
Քաղաղատենչ, տնչախոով  
Ոսկորներուն խրչիւնով,  
Իբր աշխու, իբրեւ տաղ  
Արեգակին փրկութեան,  
Մեր մեռելները ա'յսպէս  
Քոք ժըխորին մէջ օրուան  
Հագեմբմունջ կ'ըսեն մեզ...

« — Երկրի վըրայ ո՛չ մէկ բան,  
Բացի Յոյսէն, իրական  
Ու ճշմարիտ է ու մեծ...  
Մենչ գատուած մեր հոգին  
Եղաւ տանար ու բազին  
Ու զըզըրդաց ու երգեց  
Ու եղաւ միշտ լուսավառ՝  
Քանզի լեցուց զայն անվերջ,  
Գունէն մինչեւ ի կամար,  
Յոյք անլուս եւ անչէջ... »

« Պէտք է յուսաք տակաւին.  
Երկինքը մէջն է հողին.  
Հողէն մեր Յոյսը առինք  
Եւ դարձուցինք մենք անո՛ր  
Մեր Յոյսն՝ արեան պէս բոսոր,  
Յոյսը՝ ճերմակ գերդ քրտինք,  
Որ ողորցց մեր դաշտերն  
Ու անեցուց, բազմացուց  
Հասկն՝ հատիկով ծանրաբեռն  
Հատիկն՝ օրհնեալ ի հրնուց... »

Մեր մեռելները կ'ըսեն  
Հողին տակէն, երեսէն .  
« Պէտք է որ հասկը սսկի,  
Պէտք է որ հասկը յոյսի  
Ձեր սրտերուն մէջ, տըղա՛ք  
Ամէն, ամէն երկնից տակ,  
Ձնդի համար ու մեղի՛՝  
Յաւիտեան պէտք է բուսնի... »

## ԽՈՐՀՈՒՐԴ ՎԱՐԴԱՆԱՆՑ

Ա.

Պիշեր մը երբեք այսպէս լուռ ու լուրջ  
Ձէ դիպուած, հսկած բանակի մը շուրջ:

Եւ բանակ մ'երբեք, խաւարին մէջտեղ,  
Ձէ եղած այսպէս լուսադեղ, անմեղ:

Երկինքն այս գիշեր երկիրը կ'օրբէ,  
Հոգիներն Հայոց խրմով կը խմորէ:

Հո՛ս խաչեր եւ հո՛ն սաղաւարտ ու սուրճ  
Խաւարի ծովուն շիթերն են մաքուր:

Հրաման Վարդանի. — Ամէն կողմ անո՛ւ  
Կոչնակներու կանչն հանդարտ կը թրթռայ:

Ամէն կողմ սեղան, մոմեր, երէցներ,  
Բանակը ճաշով կ'աննէ. այս գիշեր:

Է՛ն վերջը Վարդան՝ գլխաբաց, հետի,  
Կուգայ հազորդուիլ արեամբն Յիսուսի:

Եւ խաչ հանելով՝ զինուորներն ամէն  
Կը դառնան խումբ-խումբ ... ու խո՛ր կը ներհեն...

Բ.

Դաշտն՝ արշալոյսին՝ խունկ է, կը մըխա՛յ.

Ձէնքերու շաշիւնն իր շուրջն է ծնծղայ:

Թշնամի բանակն, ամպի սէս խաւար,

Կ'երեւայ հետուն եւ կը սահի վար...:

— « Վասըն Եիսուսի, վասըն Հայրենեաց՝

Եառա՛ջս. Վարդանի ձայնը հոն գոռաց...:

Գիշ յետոյ արդէն խառնուրդն է անհուն...:

Կեանքէ կեանք կ'երթան զինուորներն Հայուն...:

Վարդան, իր ճերմակ ձիով, զրբահով,

Ամենքէն առաջ, ամենքին է քով:

— « Եողթեցի՛նք, կ'ըսէ, Պարսիկը փախաւ...»

Ու կ'իջնա՛յ՝ ապով իր հողին ամբաւ...:

Գ.

Սեւցած երկրնքին ներքեւ՝ երկրնքի

Ճածանչ մը յանկարծ գետնէն կը ծագի:

Վարդանի հողին, հրբազմանտ անշէջ,

Կը մտնէ՛ մըռայլ ապագային մէջ:

Հողիններուն մէջ ան կ'երթա՛յ առաջ՝

Հողիններէն դուրս ցըցած սուր ու խաչ:

Կը զարնէ խաչովն ու սուրովը գիր

Կը գըրէ, կ'օրհնէ՛ Վարդանը Կարմիր:

Դարերը կ'անցնին՝ բայց Վարդանը Քաջ,

Բայց Վարդանը Սուրբ, կ'երթա՛յ միշտ առաջ...:

## ՏԱՂ ԳՐԱԲԱՐԻՆ

Ո՛վ Գըրբարար, տո՛ւր ինձ միշտ, անուշութիւնն ինձի տա՛ւր  
Առատութեամբը հանդերձ քու սեղանիդ արգադիր՝  
Մեծընծայուած, մայիսեան մեր երկընքին տակ մաքուր,  
Մեր սարերուն վրայ պարող մուսաներուն զերընտիր...

...Գողթնի գլինին է անա՛՛ փրփրադէզ, վարդահուր,  
Որ կը հոսի ակազեայ եղջիւրներէն դարալիր...  
Ոորենացին է՝ ամբոս ու Եղիշէն՝ մեղրալուր...  
Մինչ թարգմանիչք հաց են սուրբ, խորտիկ՝ ամէն Պատմադիր...

Ո՛վ դուն, կոչո՛ւնք փառայեղ. դուն կը մըխաս տակաւին՝  
Իբրեւ կաթսայ մը սլըղինձ ուր կ'ետայ միտքն Եղնիկին,  
Իբրեւ շամփուր մ'ուր կ'այրի Նարեկացւոյ մեծ հողին,  
Իբր ինկաման մ'որուն մէջ սի՛րտն է զըրեր Շնորհալին...

Եւ մուսաները մինչդեռ բայրովըզ հոն կ'արբենան՝  
Դո՛ւն, ս'ի մըթերք երբեմնի մեր սրբութեան, գիտութեան,  
Դուն զըրաւած ես անա՛՛ եկեղեցւոյ մեր սեղանն  
Ու քե՛զ հոնկէ մնղի մի՛շտ կը բաշխէ հայ քահանան...:

## ԿԱՄՈՒՐՋ

Մերթ ալ՝ կ'ուզեմ իմ ազգիս  
Սիրոյն համար ու բարւոյն,  
Ընել կամուրջ մը հողիս,  
Իբ անցեալէն խորագոյն  
Գէտ՝ ապագան սրլացիկ  
Կամո՛ւրջ մ'ուրկէ մեր նախնիք  
Եւ մեր աստուածք յամբօրէն  
Յառաջանան ու բանան  
Մութ, անծանօթ, գոց ճամբան,  
Յեղը կրկի՞ն հոն երկնէն....

Կ'ուզեմ նետել կամուրջն այդ  
Պաւարին մէջ ներկային՝  
Իբրեւ երկար ճառագայթ,  
Իբրեւ թե՛ւ մը լուսնային,  
Մինչեւ որ իբ ներքեւէն  
Ընկըմոզները ամէն  
Իրենց նայուածքն առնեն վեր  
Ու իբ լոյսին մէջ յանկարծ  
Իրենց թեւերը տեսած՝  
Ընեն կեանքի՛ շարժումներ....

...Գամուրջն անա, մութին մէջ,  
Ամբախարիսիս, ապահով...  
Ու կը քալեն անընդմէջ,  
Կշորած, ծանր քայլերով,  
Մեծ ըստուերները բոլոր  
Մեր անցեալին դարաւոր...  
Ի՞նչ գիտութիւն, Աստուած իմ,  
Եւ ի՞նչ անհուն զրթութիւն  
Պորը անոնց աչքերուն,  
Ի՞նչ կշտամբանք մըտերիմ...

Տեսէ՛ք, անա կը նային  
Ու կը ջանան ելլել վեր՝  
Պարակներէն ներկային  
Տփափն ու խոնջ հոգիներ...  
Հըբ՛ւշք, անոնք կը ճանչնան  
Հիմա այն ուժն անսահման՝  
Որ արիւնէն նախահարց,  
Անոնց սրտէ՛ն ու մտքէ՛ն  
Մեկնած՝ իրենց էր եկած,  
Եւ անոնք լսւրջ են արդէն...

..Ի՞նչ փոյթ թէ ի՛մ կամ ուրիշ՝  
Հողի մը պէտք է սակայն,  
Արեւաշող, աստղանիշ՝  
Որ հողիին Հայութեան  
Ըլլայ ճամբայ ու ճանանչ.  
Ըլլա՛յ անոր բազմատանջ  
Գեանքին, յոյսին ապաւէն...  
Ըլլա՛յ ամբարն այն՝ որուն  
Մէջ լեցուի հունձքն հայրերուն  
Եւ փրկէ՛ ազգն այս սովէն...

## ԴԱՌՆ ԱՂՈԹՔ

Վ'ատեմ հեղուկը՝ բաշխիչ գինովութեան, թմբիրին  
Եւ երազին խմբական, կ'ատեմ սրտովըս բոլոր.  
Կ'ուզեմ սրուակն իր կտարել եւ կ'աղօթեմ որ անոր  
Իբրեւ դեղթափ՝ տաս մեզ, Տէ՛ր, ճշմարտին ցունցը ուժգին...

Զի մինչեւ ե՞րբ վերջապէս՝ ոխն ու վրբէժն անկարող  
Պիտի դգուենք ուժի աեղ, եւ ճանկերով կատաւի  
— Ան ալ կտարա՞ծ — ըսպառնանք ու ըսպասենք որ բացուի  
Դուռը մըթին այս բանտին՝ մեր վրբայ մե՛զ նախ գոցող...

Աստուա՛ծ, այն տենչը տո՛ւբ մեզ՝ որ կ'ամփոփուի, կ'ամբանայ,  
Որ չի ցնդիր բառերով. որ հողին, միտքը ամբողջ  
Իբժով տակաւ կը պրկէ. որ արցունքին ախամայ՝

Կուտայ իսկոյն յաջորդել ժըպիտին ճիգը առողջ.  
Որ կը մերժէ ամէն յոյս՝ եկած դուբսէն, միջոցէն,  
Եւ կը պայթի՞ երբ այլ եւս զինք ըսպառած կը կարծեն...

ՓՈՒԽ - ԱԶԳ

Այդքան պզտի՛կ, պզտիկցա՛ծ՝ պէ՛տք է որ դուն տակաւին  
Քու խարակէդ ընես մեծ՝ մե՛ծ շարժումներ, կարծելով  
Ըլլալ կեդրոնն աշխարհի եւ կարծելով թէ ինքնին  
կրնաս լընուլ, խափանել, ցամքեցընել ամէն ծով...:

Պզտիկ, պզտի՛կ դուն անկի՛ւն, ո՛չ իսկ անկիւն՝ այլ կէտեր  
Տրուած հոս հոն եւ որոնց զիծերն, որմերն են ինկած,  
Պէ՛տք է յուսաս տակաւին պալատը մեծ՝ զոր կերտեր,  
Կանգնե՛ր էր միտքըդ, աւա՛ղ, այդ փոշիով գետնամած...:

Նւ երբ քու շուրջըդ հիմա ամէն հին շէնք վար կ'իջնայ  
Ու ձեւ կ'առնեն նոր շէնքեր անոնց ինկած տեղին վրայ,  
Ի՞նչպէս, փոշի՛, դուն կողմել նրման հին շէնք մը կ'ուզես:

Մէն մի ցնցում քեզ կրնայ տարանջատել վերջնապէս.  
Աշխարհ չընէ՛ր պիտի հող. հողը քեզի է, յուսա՛.  
Դիզուէ՛. փոշին լսկ այդպէս թերե՛ւրս հող, քար ըլլայ...:

## ՆԵՐԿԱՅ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Ներքե՛ որ քէն ըրի քեզի քիչ մը ատեն  
— Մինչեւ երէկ — ու գեռ տաք չեմ բոլորովին...  
Բայց կը խըլէ շունչըդ ինձմէ կայծեր արդէն՝  
Զըփայլած հին ու փայլելիք բոցին հաշուին...:

Սրտէս ատաղ մի՛տքս յարեցաւ, փարեցաւ քեզ...  
Սիրաբը ունի յիշողութիւն մ'աւելի խոր,  
Եւ չէ՛ր կընար ան չըյիշել Սո՛ւրբն ողջակէզ  
Սարոյիին վրայ ուրկէ՛ փիւնիկ՝ ծընար դուն նոր...:

Ու գոհացաւ մի՛տքս քեզմով, ըստփութեցաւ.  
Ուրախացա՛ւ մինչեւ անգամ. քեզի դիմեց՝  
Ու կը դիմէ հիմա՛ ինչպէս դա՛նձի մը մեծ...:

Տարբե՛ր ես դուն մեր երազէն. — աւելի՛ լաւ.  
Աւելի լաւ՝ կ'ըսեմ, այո՛, անդիդ, անգութ.  
Զի դատակնիքն է չեղածին՝ փա՛ստն ըլլալուդ...:

## ԵՐԵՔ ԿՈՉԵՐԸ

Առտուն կանուխ՝ ո՞վ է որ  
Դուռըս այսպէս կը զարնէ...  
Դո՛ւն, ըսպիտակ ու աղուոր  
Ծրա՛ց... կուգա՛մ, ըսպասէ՛.  
Աշխարհի ծայրը մինչեւ,  
Մինչեւ լուսին ու արեւ՝  
Ո՞վ ըսպիտակ, վէտիվէտ  
Ծրա՛ց, կուգա՛մ ետեւէդ...:

Յերեկ ատեն՝ ո՞վ է որ  
Կը բաղխէ դուռըս այսպէս,  
Ընդհատ-ընդհատ, զօրաւոր...  
Ա՛հ, այո՛, դուն, դուն Պարտքն ես՝  
Հըրամայող, խստացող,  
Ո՞վ Պարտք՝ որուն գող ի գող  
Կը հետեւիմ ես ահա  
Բացած դժնէ՛ ճամբուն վրայ...:

Իրիկուան մէջ՝ ո՞վ է որ  
Կը ցնցէ դուռըս մեղմիւ...  
Այս ի՞նչ ձայն է՝ դաշն ու խոք՝  
Զոր կը լրսեմ ես հաղիւ...  
Մա՛հ գեղեցիկ, Մա՛հ վրսեմ,  
Կ'սպասէի քեզի ես  
Ու հետդ ահա կը քալեմ՝  
Պելօք ու լուս, գաւկի՛դ պէս...:

## ԽԱՌՆՈՒՐԴ

Չեմ ըմբռնէր թէ ի՛նչպէս սմանք կ'ապրին երջանիկ  
թշուառութեանց մէջ այսչափ. կ'ապրին անփոյթ՝ խորհուրդին  
Դէմ այս խորունկ, չարութեանց, տխմարութեանց այս մօտիկ՝  
կ'ապրին խաղաղ, իբրև թէ լուկ հայելի մ'ըլլային...:

Ես՝ գրթութեան մերթ արցունք կ'ըլլամ ամբողջ հոգիով.  
Մերթ՝ կծկրած մութին մէջ, կ'ըլլամ ամբողջ որոնում.  
Ծաղրն ու ծիծաղը կ'ընեմ երբեմն բերզս ապահով,  
Զայրոյթն ալ՝ փոս մը երբեմն, ուրկէ զբժոխք ես կ'ոսանում...:

Ա՛հ, գոնէ գո՛ւա մընային տարրերն այս խոր տանջանքիս...  
Մինչդեռ հիմա, խառնուած թշուառութեան՝ կը տեսնեմ  
Օձասողուն չարութիւն. տխմարութիւնը դժխեմ՝

Բարութիւնով ջրբոտած, եւ կը տեսնեմ նաեւ զիս  
Տիեզերքի ու կեանքի մեծ խորհուրդին դէմ կանգուն,  
Լոյսով մը փոքր՝ որուն վրայ կիրքերըս շուք կը թողուն...:

## ՏԿԱՐՈՒԹԻՒՆ

Պո՛ւն զըթասիրտ ու զըթացուած տրկարութիւն,  
Քեզ զօրութեան վերածելու համար որքա՛ն  
Պէտք է արցունք թափել տայ մարդը մարդերուն  
Սև իբ աչքէն որքա՛ն արցունք պէտք չէ իյնան...:

Ո՛րքան հաւատք, մացաններուն վրայ շուրջի  
— Հաւատք ու սէր՝ կաթնափրփուր գե՛ղմ ըսպիտակ —  
Պէտք է խուզուի իբ հոգիէն ու հոն կառչի  
Ու ծփծրփա՛յ՝ զերդ պարտութեան երկար դըօշակ...:

Ճամբան՝ շիտա՛կ այնուհետեւ կ'երթայ յառաջ,  
Կը բարձրանա՛յ՝ կ'ըսեն՝ ճամբան, ու անոր վրայ  
Հաստատաքայլ գացող այս մարդն որ կ'երեւայ,  
Սև կ'երթայ ո՞ւր... մարդն է՝ կ'ըսեն՝ զօրեղ ու քաջ...:

Ո՛վ դուն, մանտ՛ւկ Տրկարութիւն, ընել ի՞նչպէս՝  
Որ անունովրդ ու հոգիովրդ դուն յողթես...:

## ՄԵԾ ՀՈՎԵՐ

Ո՛մա՛նց միայն, քիչ անգամ, տիեզերքի չորս ծագէն,  
Մեծ հովերու պէս յանկարծ խոհերը մեծ կ'այցելեն,  
Բեռնաւորուած խորհուրդի փոշիներով՝ զոր խըլած  
Են աստղերէն կենդանի եւ ուր պահուած կայ Աստուած...:

Մինչդեռ շատեր՝ իբենց մէջ, իբենց միսէն ծըլարձակ՝  
Կ'զգան փուշեր ա՛յնքան սուր, սր կ'ըլլայ սիրաբ ծակ-ծակ,  
Ու անդրադարձ, խրոսոված՝ կը հակի միտքն անոր վրայ  
Սւ արիւնտով սրտին կը ներկըւի, կը կուրճայ...:

Երնէ՛կ նորէն այն մարդուն՝ որուն այսպէս միտքն ամբողջ,  
Մարմինին հետ ու մարմնէն խոցուող սրտին հետ միայն՝  
Կսկըծալով, դողալով կ'երթայ ընդմիջա համաձայն...:

Իսկ վա՛յ անոր — վա՛յ ինձի — որ կէս-մեռել ու կէս-ողջ,  
Կը գալարուի ինքն իր մէջ ու կը լըսէ քիչ մ'անդին  
Փախուստն իբեն այցելած, զինք չըզբտա՛ծ մեծ հովին...:

## ՀՈՒՐ ԱՏԵՂԾԻՉ

Անուն չունի, հունան ի՛նչի է, չեմ գիտեր,  
Բայց կը շարժի, բայց կ'աշխատի մութին մէջ.  
Հոգն անոր շուրջ կ'զգայ հըսարտ սարսուռներ.  
Ինկե՛ք է սաղմն իբ մէջ կեանքի մը անվերջ...:

Սկզբնական, ըստեզծագործ խորհուրդին  
Ան մտքիս մէջ նետուած չնչին մէկ հիւլէն,  
Ան բորբոքած, բոցատարած մէկ փոշին՝  
Որ հունաւորն եկաւ վառել անհունէն...:

...Ո՛վ հոծութիւնն ու խորութիւնը կեանքի՝  
Զոր իմ մտքիս հիմա բառերն այս կուտան  
Եւ բառերուն՝ կուտայ Հոգին բընութեան...:

Կը ճանչնամ զինք... եւ այժմ ինծի կը թըւի՝  
Որ տիեզերքն ամէն առտու, ամէն ժամ  
Վերըստեզծող Մտքին ես մաս կը դառնամ...:

## ԽԱԻԱՐՈՒՄ

Անդրադառնում. խարազանն հիմա կ'իյնայ ձեռքէս վար,  
Մինչդեռ առաջ՝ շաչելով օդին մէջ ծակ կը բանար,  
Ուր կ'երթային կորսուիլ մարդերն, իրերն այն ամէն՝  
Որ սիրտս իրենց չարութեամբ, տրգեղութեամբ կը ճնշեն...:

Կը հանդուրժե՛մ մինչ առաջ կը կանգնէին պատնէշներ  
Յանկարծակի հողույս մէջ եւ պատնէշէն կ'արձակէր  
Մերթ իմ զայրոյթս հըրացան, մերթ հեզուութիւնս իմ՝ սըլաք  
Ու կռուադաշտ կը նետուէր հոնկէ իմ անձըս համակ...:

Իտէալին կը մտնում հիմա դդեակը յաճախ.  
Լուսառեւիլ, բարձրաբերձ դդեակը տե՛ղ մը՝ հեռո՛ւն,  
Եւ գոհ կ'ըլլամ ապրելով խորը այս ցած հիւղերուն...:

Տէ՛ր, ինձ ցուցո՛ւր նորէն օրն՝ ուր կենսառոյգ, կենսութախ  
Պիտի կուրիմ աննշմար, անհուն գանձի մը համար՝  
Կատաղութեամբ մը խենթի, յիմարութեամբ մը արգար...:

## ՏԻՐԱՆ ՁՐԱՔԵԱՆ

Եւ ճանչցայ մէկն՝ որուն աչքէն կը ցայտէր  
Ռմէն վայրկեան հաւատքի կայծ մը կարծես,  
Որուն խօսքէն կը փլչէին խաւարներ,  
Որուն հոգին կ'երթար առաջ հոգիէս....

Այդ մէկը դո՛ւն եղար, Տիրան Ձրաքեան,  
Ժամանակին ետեւ քանի կը մընաս՝  
Այնքան ես մօտ կուգամ քեզի ու այնքան  
Հուսաւայծառ կը ցոլայ դէմքդ իմ վըրաս...

Ո՛չ մէկ խորհուրդ քուկինիդ չափ էր լեցուն  
Գիտցըւածին, ըզգացուածին հրճուանքով.  
Եւ ոչ մէկ սիրտ քու սրտիդ չափ էր եռուն  
Գէպի ալոց սիրտը սիրոյ կրօնով....

Թառերը դոյն ու գիծ էին քեզ համար.  
Կը խառնէիր զանոնք զբշովդ իրարու  
Եւ կեանք մը նոր ահա յանկարծ կը դողար  
Եւ կը շողար լոյս մ'ահա հին բոցերու....

Ժամանակին ետեւ հիմա կը կանգնիս՝  
Ամբողջովին ա՛լ պարզըւած, միացած.  
Քեզմով հիմա դուն կը պարզես նաեւ զիս.  
Դուն Աստուծոյ զացող ճամբուն դուն ես բաց...

Քեզ չեմ ողբար, զայն կ'արգիլես անշուշտ դուն.  
Ձեմ փնտրուեր, քանզի ներկայ ես անշուշտ,  
Եւ դուն հիմա, աստուածայազ գիտութի՛ւն,  
Կ'ուզես քեզմով իմ նօթութիւնս ընել կուշտ... :

Հըպարտ էիր եւ շատ խոնարհ դուն եղար.  
Կըքոտ ու հետս՝ եւ բոյսերուդ չափ սիրած  
Նդար խաղաղ ու ցուերու բարերար.  
Տո՛ւնկ մը եղար ազօթաձեւ, գետնամած... :

Կը մաքրէիր՝ հարուածներով խարտոցի՝  
Քու աղամանդդ իր խաւարչուտ գուղձերէն.  
Եւ ո՛չ մէկ զարդ ալ ուզեցիր որ կ'զի  
Մերկ հողիկդ՝ որ կը հազուէր երկինքէն... :

Եւ հին սուրբի, մարտիրոսի մը նըման՝  
Անծայրածիր փառքին համար Աստուծոյ,  
Դուն ուղեցիր ուբանալ փառքդ իրական,  
Ուբացար փառքդ ու ետդ ու կեանքդ ալ յետոյ  
Եւ հեռացա՛ր քու հաւատքիդ նաւուն վրան... :

## ՊԵՓՈՎԸՆԻ ՍՈՆԱՔԻՆ ՎՐԱՑ

### Ա. - ՀՐԱԺԵՏ

Մընա՛ս բարով... Բայց դեռ ոչ. պիտի ըսեմ քիչ յետոյ  
Մընաս բարով, ու միջոցն արագնամեծ հաստատուի,  
Բացուի՛ պիտի մեր միջեւ ու ըսկըսի պիտի, օ՛հ,  
Նոր ժամանակ մը հոսիլ՝ ամայութեան, կորուստի՛... :

Մընա՛ս բարով... Կը կանգնի բառը եզերքն անհունին,  
Հսկայ բըրի՛չ, ու կ'իյնան աշտարակներ, պալատներ,  
Կ'իյնայ պարտէզ մը կախեալ ու կամուրջներ կը փրլին  
Ու սեւ փռշի մը յանկարծ կ'ընէ ամէն բան ըստուեր... :

Կը դառնամ ես անգամ մ'ալ՝ հրբելով ես ապագան,  
Տըւած կռնակըս անոր, ու անցեալին կուրծքըս բաց...  
Անցեալն ամբողջ՝ հոգիիս մէջ կը լեցուի՛ փըստբած... :

Մընա՛ս բարով... Երթունքէս բառը փրթու՛ վերջնական,  
Ու ներկայէն ես փրթայ ու կը վազեմ խելայեղ,  
Մինչ կը վազէ ինձմէ շուտ ճակատագի՛րըս ամսեղ... :

Բ. - ԲԱՅԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Անապատին վրայ դիշեր... Կ'ըլլայ դիշերն առաւօտ.  
Կրկնէրեւոյթ մը շքեղ կը կախուի հոն՝ օդին մէջ.  
Յետոյ յանկարծ կ'անհետի... Եւ իրիկունը մակոտ  
Կ'իջնէ նորէն, կը դողան նորէն սաստիկը անշէջ...:

Բայց անապատ, անապատ... Երբեմն բոյս մը չնշին  
Նայուածքիս գէմ կը նետուի. երբեմն լոյս մը նիհար  
Ձեռքիս վրայ կը ցայտէ... Ու կը յառիմ երազին՝  
Որ կը շողայ սրտիս մէջ ու կը մարի՛ յամբարար...:

Հոր մըն է օրն, ուրկէ գուրս՝ հին յիշատակը առջիս  
Նդերափայլ կը կանգնի իր թեւերով խաչածեւ  
Ու զիս աակա՛ւ կը թաղէ իր ծանրութեանը ներքեւ...:

Ան կը ճնշէ, կը շոյէ ու կ'օրօրէ իմ հոգիս...  
Բայց անապատը նորէն զիս կը սեանէ իր վրբայ՝  
Իբրեւ ըստուեք մ'որ անվերջ կը կարճընայ, կ'երկըննայ...:

## Գ. - ՎԵՐԱԴԱՐՁ

Օհ, զանգակնե՛ր, զանգակնե՛ր... Ու ծաղիկնե՛ր, ծաղիկնե՛ր...  
Երկինք կապոյտ է այնքա՛ն, երկինք ա՛յնքան է թեթեւ՝  
Որ զայն գրկած եմ կարծես, մինչ ճամբան ալ՝ զեանէն վեր  
Ելած կարծես՝ կը բռնէ՞ զիս աշխարհի ի վերեւ... :

Ո՛վ կ'սպասէ ինձ այնտեղ.— բայց ամէն ինչ, ամէ՛ն ինչ.  
Եւ է՛ն առաջ՝ ալիքներն այն ծովափի հասանքին,  
Եւ է՛ն առաջ՝ բլուրին վերայ բացուող այգը ջինջ.  
Եւ է՛ն առաջ՝ մեր տան դէմ ծաղկող ճերմակ նըշենին... :

Յետոյ, գիտէ՞ք, առաջին գարնանային փոսուումն՝  
Մութը հազիւ թէ կոխած, յաստիկներու պատին վրայ.  
Յետոյ զեփուռը համեղ եւ խնկահո՛տ լուսնկան... :

Ու թէեւ մէն մի քայլիս գիւղը տակաւ կը նեղնայ,  
Բայց չափ չունի, չունի՛ սիրտս, ու կը զարնէ՛ սիրտըս ծափ,  
Վարար գետի մը վերայ սիրտըս կ'երթա՛յ ասիէ ասի... :

## ԴՌՆ ՆԵՌԱԻՈՐ ՄԱՆԿՈՒԹԻՒՆ

Ահ, եթէ դուն չը ճանչնաս՝ ալ ո՞վ կրնայ ճանչնալ զիս,  
Դո՛ւն, հեռաւոր մանկութիւն՝ որմէ եկայ յամբարաբ  
Եւ որ հիմա անցեալին վրայ պառկած կ'երեւիս՝  
Երազափայլ ու դացա՛ծ կարծես աշխարհ մը օտար...:

Բայց կ'աթըննաս դուն երբե՞ն ու զիս երկար կը դիտես՝  
Մինչ գրկարաց կ'սպասեմ քեզի յուզմամբ, անձկութեամբ  
Աչքերու խունկ են ամբողջ ու կը մըխան գորովէս.  
Կը ցոլանայ աչքիս մէջ աչքիդ երկինքը անամպ...:

Բայց կը թըւի թէ վախցար ու հոգւոյս մէջ վերբասին  
Խորշէ ի խորշ կը փախիս ու պահուըտիլ կ'երթաս դուն՝  
Զիս ձրգելով աւելի հիմա տրտում ու նրկուն...:

Կը հասկընամ, չես ճանչնար դուն այս յոգնած ծերունին՝  
Զոր պահ մը հայրդ յուսացիր եւ որ եղբայրդ է միայն,  
Քեզմէ հեռու չարաչար մեծցած եղբա՛յրդ անարժան...:

## ԶԱԽԱԿՍ

Բայց դուն, անհուն զաւկի սէր, ինչպէս իմ մէջըս ինկար,  
Անապատին մէջ ինկած ազնիւ հունտի մը նրման՝  
Որ կոծեցաւ. ծրելուն ըսպասելով ընդ երկար,  
Իր հոյզն ի զուր ուղղելով երկրի հոյզին միութեան...:

Մանկութենէս, կը յիշե՛մ, նախ քան ուրիշ ամէն սէր,  
Քան ծրնողքի, քան քրքոյ, ես կ'զգայի՛ իբրեւ հայր  
Զաւկիս համար ապագայ, զաւկիս համար որ մէջս էր՝  
Սէր մ'որ ինձմէ գէպի ինձ կ'ընէր շրջան մը անծայր...:

Կը տեսնէի զայն այնպէս ինչպէս եղբայր մը պատիկ,  
Կը տեսնէի զայն հոգի, կը տեսնէի զայն մարմին  
Եւ մերթ՝ իջած զայն կարծես վրբան տըղու մը գէմքին...:

Ա՛հ, իմ տըղա՛ս, որ կ'ապրէր տասն մ'այնքան ինձ մօտիկ,  
Հիմա մեկնե՛ր է իսպառ, ու ամպերուն մէջ երբե՛մ,  
Անցնող ճերմակ ամպերուն, ես զինքը դեռ կը գտնեմ...:

## ԵՍ ԱՅՍ ԳԻՇԵՐ

Ես այս գիշեր կը ծախեմ յիշատակներըս ամէն...  
Կէս գիշերի լուսնին տակ կ'ուզե՞ս որ մենք սակարկենք.  
Ինչպէ՞ս, չունի՞ս դուն ինծի բան մը տալիք փոխարէն.  
Բայց միայն շուքրդ տրդա՛ս, հասակիդ շուքր աննենգ...:

Սուրբ քաղաքին անհամար խորաններուն վրայ կ'ուխտեմ  
Անա քեզի որ սիրով պիտի զանոնք յանձնեմ ես  
Առ տա՛ր ամէնքն իմ տմբո՞ղջ այս գիտութիւնըս տրտում  
Անցեալս անվերջ կրբելէ զիս ազատէ՛ վերջապէս...:

Եւ տո՛ւր ըստուերրդ ինծի...: Անապատին մէջ երբոր  
Երթամ մինակըս նորէն, մերկ՝ հողիով ու մտքով,  
Ընկերանա՛յ թող ինծի օրօրուն շուքրդ աղուոր՝

Իբրեւ ինձմէ իսկ ծընած թեթեւ հոգի մ'հոգւոյս քով,  
Իբրեւ իմ իսկ պաշտամունքս հողին վրբայ երկարած՝,  
Հողէն ելած ու հողին տըւող համբո՛յր մ'երկիւղած...:

## ՄԷԿ - ՀԱՏԻԿՍ

Ըմ մէկ հասի՛կըս հիմա, որ կը գիտես զիս վըհատ,  
Հայելիին ջըհորէն,  
Քեզի նըման ու քեզմով կը նայիմ ես ալ վըբող  
Երկարօրէն ծանրօրէն...:

Ե՛ս արդեօք քեզ, թէ դուն զիս կը մեղքընանք աւելի՛  
Երբ զիրար լուռ կը գիտենք...  
Քովըդ եզրայրդ է մեռած, քու հին ընկե՛րըդ լոյսի՛  
Զոր դեռ այսօր կ'ողբանք մենք:

Նոր զարնըւած էր երբոր գիշեր մ'երազըս տեսայ՝  
Թէ մութին մէջ, հեւ ի հեւ,  
Կը քաշէի կարասի փոխադրող կառք մը հսկայ՝  
Քովըս շուքի մը հետ սեւ,

Որուն յաճախ կ'ըսէի անձկութիւնով ու վախով.  
« — Ընկե՛ր, լաւ չեմ տեսներ ես,  
Դուն կը տեսնե՞ս... » եւ թէեւ կը քալէինք քովէ քով՝  
Բայց ձայն չըկա՛ր ընկերէս:

Ձէի գիտեր թէ արդէն մեռած էր խեղճն այդ պահուն.  
Այնուհետեւ չարթնցա՛ւ,  
Զըխօսեցաւ ան երբեք. վերջէն տեսար զինքը դուն,  
Ան չըտեսա՛ւ քեզ բընաւ...:

Հայելիին ջրհորէն մինչ կը նայիս դուն ինծի  
Ու կը նայիմ ես իր մէջ,  
Կը նշմարեմ՝ ջրամոյն որպէս գըլուխ մը սուրբի.  
Անոր ծըփա՛լը անվերջ...:

Իմ մէկ հատի՛կս... օհ, ինչպէ՛ս սիրտըս վըրադ կը դողայ՝  
Յըբ կը տեսնեմ քեզմով քեզ.  
Քու արցունքո՛վըդ քեզի կը պողատիմ ես հիմա՝  
Որ դուն ալ զիս չըլըքես...:

## ԱՊԱԳԱՆ

Ապագան ահա կը ժպտի՛ նորէն՝  
Մեծ կերած, լացող տղու մը նրման,  
Որ կը նշմարէ փողոցին խորէն  
Կապիկ մ'ու իր տէրն՝ որ կը մօտենան...

Կը ժպտի՛ ինծի Ապագան՝ որ սեւ  
Քօղ մը երեսին՝ այրի մըն էր լուս.  
Կը ժպտի՛, եւ իմ նայուածքիս առջեւ  
Կը բացուին, կարծես, դուռներ ոսկեհուս...

Ապագան՝ թէեւ չըլլայ անսահման  
Ինչպէս ատենով — անսահման յոյսեր  
Սէրեր, հրճուանքներ՝ երբ անմահութեան

Արեւին ներքեւ ինծի կ'երևէր —  
Սակայն կը ժպտի՛ ու կը խօսի ալ,  
Տես, հոգի՛ս, դէմքովս ու ձայնովս անցեալ...

## ԳԻՐՔԵՐ

Վիրքերու մէջ կան ինչ վիճ ըզգացումներ, խորհուրդներ...  
Ինչ որ ունի լուազոյն՝  
Մարդը խըլեր է իրմէ, ծալլեր, ի պահ է դըրեր  
Կողքերու տակ գոյնըզգոյն:

Եւ հըսարա է անոնցմով... Օր մը երբոր Հըրատէն  
Այցելուաներ գան երկիր՝  
Իր զիրքերուն մէջ պէտք է մարդը գտնեն ու գատեն,  
Մարդը՝ վըսե՛մ գըրազիր...:

Աստուածը ինք է զըտած, զըտած՝ զիրքի մէջ գամած.  
Երբ Անոր պէտք ունենայ  
Ընդդէմ մէկուն կամ միւսին, — իր բանտերէն մըթամած  
Կերթայ հանել զԱնիկա...:

«Մի՛ ըսպաններ — ի՛նք ըսած է Աստուծոյ որ ըսէ —

« Քանզի ամէնքդ էք եղբայր...»

Սև գինուորին ի՛նք կանգնած է մարմարէ՛, պրզինձէ՛

Յուշարձաններ անհամար... ,

Բայց գիրքն ուրիշ, կեանքն ուրիշ. գիրքը արդոց, ծերերուն,

Խենթերո՛ւն պէտք է միայն ,

Տըկաբներո՛ւն՝ վերջապէս. մարդը ուժեղ ու բեղուն

Զի՛ գրբեր, չի՛ կարգար գայն .

Զօրաւոր մարդը կ'ապրի՛ մոռցած գիրքերը բոլոր

Սև գիրքերուն հակառակ

Կ'ստեղծէ նոր ճամբաներ՝ հոգ չէ թէ ծուռ ու մոլոր... .

Միայն Աստուած է շիտակ... .

Արդարութի՛ւն, բարութի՛ւն, մարդը ձեզ լաւ կը ճանչնայ՝

Ինչպէս աստղերն երկընքին .

Ձեզ կը ճանչնայ հեռուէ՛ն, կը հիանայ ձեր վըրայ,

Ձեզ կը քննէ վերջստին

Սև ձեր շքեղ պատկերին կը յաւելու միշտ նոր գիծ ,

Միշտ նոր գոյն մը հըմայիչ... .

Տըկաբին ձեռք կուտան հոն՝ մինչ կեանքի մէջ կուտան կից .

Կեանքը տարբե՛ր է ... մի քիչ :



Գիրքե՛ր՝ ամօթը մարդուն, կուզն ու վէրքերը անոր  
Մածկող շրքեղ ջրդամի՛թ,  
Քրդրկատէի հս ըզքեղ եւ երեւնար մարդը նոր,  
Մարդը հին եւ ճշմարիտ...:

Գիրքե՛ր, մեռած սրբութեանց, գեղեցկութեանց դամբարա՛ն,  
Ձեր շեղջակոյտը մըթին  
Օդն հանէի՛ որ թերեւս հողին մէջ մարդկութեան  
Մագէ՛ր շող մը վերջստին ...

Գիրքե՛ր, միակ ըստիսփանքն, հացն ու հանոյքն իմ սրտիս,  
Փրճացրնել ձեզ կ'ուզեմ՝  
Որպէսզի ա՛լ չըխաբէք ու չըխաբեմ ես ալ զիս,  
Ձիյնա՛մ միշտ ձեր սուտին դէմ...

Գիրքե՛ր, զիրքե՛ր կեզծպարեշա, ես կ'ուզէի միմիակ  
Մեծ զըրատան մը մէջ ձեզ  
Ամբողջովին հաւաքել, ձեռքովըս տալ ձեզ կրբակ,  
Եւ ձեր փոշին հրբակէզ  
Յրուե՛լ չորս ծալն աշխարհի, տա՛լ երկընքին անյատակ...:

## ԱՂՕԹՔ ՎԱՂՈՒԱՆ ՍԵՄԻՆ ԱՌՋԵՒ

Ղաշտերուն մէջ, դիտեցէ՛ք, նոր-նոր ծիւեր կը յառնեն,  
Որոնք փո՛ւշ են թէ ցորեն՝ դեռ չեմ գիտեր, չե՛մ գիտեր.  
Թ'երեւըս փո՛ւշ են անոնց ըստամոքսին որ՝ կուշտե՛ր,  
Նաշիհը չեն տար այլոց, մինչ նօթիին՝ են ցորեն... :

Ժամանակին մէջ հնչող խուլ ազմուկներ կը լսուին՝  
Հարուածներու, բաղխումի՛, փրլուզումի ազգարար,  
Ոտքի վըբայ ըսկըսած հողեվարքի՛ մը երկար  
Եւ գըբսի մ'որ հեռո՛ւն կը վարանի տակաւին... :

Ամենուրեք, ճնշուած մեծ հողինները բոլոր  
Կազերու պէս կը պայթին... ճապաղիցները արեան՝  
Գեանին երեսը չորցած, կարմիր բոցեր կը դառնան.  
Զուր ցրտինցները ամէն կ'ըլլան հեղեղ մը պատր

Ու կը սարսեն, կը քըշե՛ն ժայռեր, թումբեր դարաւոր... :

Տէ՛ր, բարութի՛ւնըդ այսօ՛ր, իմաստութիւնըդ հիմա՛  
Պէտք է զրկես աշխարհի՛ այս հիւլէին տանջակոծ.  
Թէեւ մոռցան անոնք Քեզ՝ բայց յիմար հօտը մարդոց  
Միմիայն դուն կեցընել կրնաս վիհին ճամբուն վրայ... :

Մտքի պատրայզը եթէ մարդերուն մէջ վառեցիր  
Ու կեանքն ըրիւր անոր իւր, - Տէ՛ր, մի թողուր որ յանկարծ  
Շրջեն կանթեղը անոնք. ըրէ՛ զայն միշտ լուսարծարծ  
Ն. փնտրուել տո՛ւր անով նշմարտութի՛ւնըդ անծիր... :

Կեանքին համար բովանդակ՝ կաթեցուր սէր սրտին մէջ  
Զօրութրին այսօրուան, զօրաւորի՛ն ալ վազուան.  
Սրահրն անոնց չըխրցուի՛ն՝ այլ պարպուի՛ն ու լինան  
Իրարո՛ւ մէջ, իրարմո՛վ հաղորդութեամբ մը անվերջ... :

Գրթա՛ գոնէ տըղայոց եւ ծերերուն. մի՛ թողուր  
Տըղաքն առանց գորովի, ծերերն առանց նեցուկի...  
Թո՛ղ ընդհարումն ըլլայ կարճ եւ թո՛ղ շուտով հաստատուի  
Խաղաղութիւնը արդար՝ կռուողներուն մէջ տըխուր... :

Թո՛ղ ստասնին ու փշրին բարձրը բերդերն անառիկ  
Նւ իյնտն վար պատնէշներն զրբահապատ եսութեանց.  
Սմէն մարդու հաւասար թող բաժնուի ամէն գոնձ.  
Թո՛ղ պարտէզները բացուին եւ թող խուժեն հոն մարդիկ  
Բայց չըկտրեն՝ ոչ մէկ ծառ, չը նզմեն՝ ո՛չ մէկ ծաղիկ... :

## ՄԱՀՈՒԱՆ

Պիտի ուզեմ երթալ Մահուան, կամովին  
Օր մը՝ հաստատ եւ դեռ առոյգ քայլերով,  
Զսպասելով որ ան ցցուի մահճիս քով  
Եւ սարսափած յանկարծ աչքերըս գոցուին:

Արքայական, աստուածային իւրն է ան,  
Որ մեր խոնարհ յարկէն երբ ներս կը մանէ՝  
Ետ ձրղելով յանկարծ պատերը դժնէ  
Կը փոխարկէ դայն պալատի մ'անսահման:

Րոպէ մը հիւր՝ կ'ըլլայ յետոյ հիւրընկալ  
Իր տունին մէջ, յաւերժութեան մը համար,  
Սերունդներու սրոնց ամբողջ, դարէ դար,  
Ան կ'ստանձնէ բովանդակ պէտքը հոգալ...:

Որքան մարդիկ հաւատացին Աստուծոյ  
Եւ կոչեցին զայն բարեգութի, բարեխնամ.  
Բայց ես, ո՛վ Մահ, աւելի քեզ կը հաւատամ՝  
Զի կը տեսնեմ քեզ եւ քու գործըդ սիրոյ...:

Աստուած, անշուշտ կայ եւ անվերջ կը խոկայ  
Տեզ մը, հեռուն, աիեղերքին իր վերեւ...:

Մինչ դուն, ո՛վ Մահ, տեսանելի իբր արեւ՝  
Անոր նրման մեր մէջը մի՛շտ ես ներկայ:

Արեւին պէս, սահախ անկէ աւելի,  
- Քանզի անոր ալ դուն իշխանն ես ու տէրն -  
Կը հասունցնես կեանքի բոլոր պտուղներն,  
Կը քաղցրացնես, կ'ընես հոյզով զանոնք լի...

Ինչպէս, նրման դեռ արեւին, լոյս կուտաս  
Աշուշներուն որոնք կոյր չեն ի ծընէ,  
Կը ցուցունես ճամբան որ քեզ կը դիմէ  
Եւ ամէն ինչ, հասանելի ու անհաս,

Որ մինչեւ քեզ, շուրջն ու վրբան այդ ճամբուն  
Եւ ծայրն անոր՝ մեզի համար կայ ի պահ...  
Այդպէս՝ լոյսիդ մէջ կ'երեւի ինձ, ո՛վ Մահ,  
Կեանքը քեզմով ամբողջ օժուն ու լիցուն,

Կեանքը՝ միայն քու մէկ պատկերդ ընտանի,  
Քու մէկ տօգոյն խուսափուկ ցուքրդ յաստիս,  
Յաւիտեանէն, զոր քու ձեռքիդ մէջ ունիս,  
Ինկած կաթիլ՝ յաւերժութեամբ ինքն ալ լի.

Կեանքը, աւա՛ղ, միմիայն մահ մ'անկատար,  
Քու առօրեայ մէկ փոքր հարուածըդ միայն...,  
Մինչդեռ, ո՛վ Մահ, ես ընդունիլ կ'ուզեմ զայն՝  
Հրզոր ու շեշտ՝ իջած ճակատիս վրայ խոնարհ...

## ՏԵՍԻԼՔ ՀԻՆ ԿԵԱՆՔԻ

Ար տեսնեմ հին հայկական վանքի մը բակն ընդարձակ՝  
Հուարնկայով ողորուն, որուն վրբայ կը բացուին  
Յածուկ դուռներ խուցերու, եւ կը տեսնեմ լուսնին տակ  
Թուժք մը արդաք՝ խաղացող այդ քարերուն վրբայ հին....

Երկու ըստուեր անոնց մէջ կը խօսակցին մեկուսի  
Սուրբին պաշտօնը առտուն եւ Եկեսցէն իրիկուան,  
Թանձրացած բոյրը խունկին եւ զըրոյցներն հըրաշքի՝  
Անոնց ձայնին ու ձեւին խորհուրդի դող մը կուտան....

Հրոեց ազմուկը արդոց.... Աղանիները միայն  
Իրենց թաղին բարձունքէն՝ պղպըլակի պէս թեթեւ  
Մերթ վուվուներ կ'արձակեն՝ մթնուրտին մէջ անձայն....

Հուսինը ե՞րբ մեկնեցաւ.... Վանքի բակին վրբայ սեւ  
Կեցեր է լուռ ու անշարժ դեռտաթի զոյզը հիմա,  
Կարծես ձեռքէն հրեշտակի մ'հաղորդութիւն կ'ստանայ....

## ԾԻԾԱՂ

Անդալ պէտք է, լոկ խնդալ - տրդաս խորհուրդ կուտայ ինձ, -  
Մարգոց վրբայ՝ որ ասոր են միմիայն արժանի.  
Ուրիշ ամէն բան ժանգ է հոգւոյն համար, որ պղինձ՝  
Ծիծաղին խիստ շրփումով կը մաքրուի, կը փայլի...:

Եւ իմ արդաս իրաւունք ունի անշուշտ... բայց ո՞ւրկէ  
Գիտէ այդ բանն անիկա. ան ե՞րբ չափեց այդքար խոր՝  
Յիմարութիւնը մարգոց, որպէսզի լաստն իր նետէ  
Վստահօրէն ու երթա՞յ անհոգ՝ ծովուն վրայ անոր...:

Քեզ, ո՛վ Ծիծաղ, ատենով երբ այնքան ալ գեռ չէի  
Քեզի կարօտ, գրկեցի զերդ կատու մը կուրծքիս վրայ,  
Քեզ գգուեցի, գրգռեցի եւ ճանկարաց, սխրալի՝  
Երեսն ի վեր շատերուն արձակեցի՝ անխնայ...:

Բայց հիմա քիչ, ո՛հ, շատ քիչ, կրնամ այլեւրս խնդալ.  
Հիմա հոգիս ինքնիրմով բըզըկտըւած է այնքան,  
Այնքան ցաւոտ, վիրաւոր՝ որ իր ծիծաղն ու ծաղրն ալ,  
Է՛ն առաջ զինք կ'արիւնհն ու իր վրբայ՝ կը մընան...:

Կեանք, խընայէ իմ տրդուս օր մը ըլլալ ինձ նրման...:

## ՆԵՂՈՍ

Նեղո՛ս սրբազան, ո՛վ ծիրանաւոր,  
Վէտ ի վէտ մինչեւ ոտքերըդ իջած  
Վառ պատմուճանով՝ զոր եկան ըստը  
Իշխանք համբուրել, շարժել դող ի դող...

Տիտանեան Նեղո՛ս, որ դարերն ի վար  
Կը սահիս կ'երթաս առանց անցնելու,  
Օղակներուն մէջ շղթայիդ երկար  
Սեղմած պահելով կեանքը քեզ հըլու...

Նեղո՛ս հեշտութեան, Նեղո՛ս պաշտամանց,  
Դուն՝ խորն՝ ւրդ բեղուն եւ դուն՝ լուռ դաշնե՛րդ,  
Շուրջըդ ամէն բոյս, անասուն ու անձ  
Շունչէդ շունչ մըն է, ընդերքէդ՝ ընդերք...

Սլքդ՝ արմաւենի՛ն կը հանէ երկինք,  
Եւ կը ծաւալէ ցանուած դաշտը զա՛յն.  
Քե՛զ աւազը թեւ, բուրգերն են ըստինք,  
Բամպակը կաթի՛դ փրփուրն է միայն...

Ուղտերը քեզմէ՛ անապատին մէջ  
Կը սորվին քալել վեհընթաց ու լուռ.

Քեզմով լի սափոր՝ կանայք ուղղամէջ  
Իրենց շուրջը քե՛զ կը թափեն բուռ բուռ...

Եւ ըսել, ըսե՛լ, հայր ու մայր Նեղո՛ս,  
Որ ժամանակին մէջ թաղուած անթիւ  
Քուրմեր ու մոզեր քեզ դիտեր են հոս,  
Քեզ երգեր, պաշտե՛ր երկիւղիւ, հեշտիւ...:

Ըսե՛լ թէ կարծեր են քեզ նոյն յաւէտ՝  
Երբ շիթ մը շունիս կեցող մէկ վայրկեան,  
Երբ, յաւէտ մանուկ, կը բերես քեզ հետ  
Հեռուէն հոյզեր միշտ նո՛ր գօրութեան...:

Ըսե՛լ, շինարա՛ր, թէ լեռ մ՛ահաւոր,  
Լե՛ւր քեզ ծընող՝ կը քանդես անվերջ  
Եւ կ'երթաս խելսո՛ւ՝ գանձերը անոր  
Տարածել, ցրուել ովկէանին մէջ...:

Ըսե՛լ թէ խորհուրդդ եւ ուժըդ անհուն՝  
Միայն վազք, վատնում, կորուստ է միայն,  
Թէ մահը լերան՝ կեանքն է դաշտերուն,  
Թէ մահն ու կեանքը բառեր են ունայն

Եւ թէ կայ միայն դոյութիւն, Աստուած...:  
Ըսե՛լ, ո՛վ Նեղո՛ս, թէ անկէ կուգան  
Այիքդ ու խոհերն այս թափառայած...:  
Ըսե՛լ ա՛յս միայն, Նեղո՛ս սրբազան,

Նեղո՛ս ալեւոր ու ծիրանաւոր,  
Նեղո՛ս ներուման, ներդաշնաւորման,  
Լուսեղ հաւատքի ո՛վ աղբիւր պղտոր,  
Ո՛վ դեռ անսահման, գետի՛ն գիտութեան...:

## ՄԱՅՐ ԵՒ ՈՐԴԻ

Ար պատմէր մայրս ինձ այսպէս.

— « Երբ դեռ եալըն կ'ապրէինք... »

— « Մայր, երբեք չեմ յիշեր ես... »

— « Դուն ս'ւր էիր, դեռ երկինքն... »

« Օր մը եղբայրըդ երէց

« Հօրըդ համբիշը սաթէ

« Սաղալով ծովը ձրդեց...

« Այդ որ ունիս՝ ճիշդ այդ է,

« Ծովը խորունկ էր այնտեղ՝

« Վեց գրկաչափ, կ'ըսէին,

« Եւ հոսանքն ալ՝ շատ ուժեղ

« Բուն իսկ առջին եալըին:

« Բերինք սուգակ մը հրեայ՝

« Որ նախ ուզեց շիշ մը ձէթ,

« Զէթը թափեց ծովուն վրայ,

« Եղաւ անոր տակ անհետ:

«Ձուքն հայելոյ պէս յստակ,  
«Պաղատ դարձեր էր յանկարծ.  
«Կը լողար մարդն անոր տակ՝  
«Մէջքէն շուանով մը կապուած»

«Երեք անգամ՝ ան այսպէս  
«Ի՛շու, ելու վերըստին,  
«Ու երբորդին՝ ի՛նչ տեսնես,  
«Համբիշը մէ՛ջն էր ձեռքին...»

\* \* \*

Ո՛վ մա՛յր, ես ինչ ընեմ որ՝  
Պաղատի ծովը հողւոյս,  
Յատակ տեսնեմ խորն անոր  
Ու կարենամ անկէ դուրս

Բերել հաւա՛տքս իմ անցեալ,  
Իմ յո՛յսս ու սէ՛րբս մաքուր...  
Մայր իմ, ո՛վ մայր սիրեցեալ,  
Պաղատեցնող ձէ՛թն ինձ տո՛ւր...»

« ՀՈԳԻՍ »

Վ'երթաս ճամբէ մը որուն վերջը ծանօթ է քեզի,  
Հասակիդ չափ ու լայնքիդ փո'ս մը՝ որուն կը լընուն  
Իսկոյն բացուածքն ու ըզքէզ առանց օդի եւ լոյսի  
Կը ձրզեն հոն առանձին, կեր եւ ընկեր որդերուն...:

Միայն ոսկոր կը մընաս... մինչեւ որ օր մ'ալ անոնք  
Տարանջատուին իրարմէ ու դառնան հող յամբապէս...  
Ինչ որ քու դէմքդ էր այստեղ - ճակատ ու այտ, աչք ու յօնք -  
Արդէն վաղուց է լավուած ու սրբուած աշխարհէս...:

Սակայն կ'ապրի՞, կը խորհիս, հոգի'դ՝ որ սիրտ եւ ուղեղ,  
Միայն ուղեղ է թերեւս, զոր կ'ըմբռնես ուղեղով  
Եւ զայն հազի'ւ երազել կընաս իրբեւ քիչ մը հով...:

Հոգի'դ՝ հողոյն Աստուծոյ գացած մօտիկ վերն, այնտե՛ղ...  
Բայց ո՛ւր է վերն... եւ «հոգիս» կ'ըսես միայն դուն հիմա  
Ուրիշ մարմնոյ մ'որ պիտի քու մարմնոյդ պէս չըքանայ...:

## ԵՐԲ ԿԸ ԽՈՐՀԻՄ

Երբ կը խորհիմ թէ ականջներս օր մը պիտի չըլլանն ա՛լ,  
Ա՛լ չըշարժին, ա՛լ չըբռնեն պիտի մատներս. բազկերակի  
Սա կապոյտ թելս՝ օր մը չըլլայ պիտի այսպէս առածըգեալ,  
Լեցուն, տրոփուն, այլ փըստրած որդի մը պէս պիտի թափի...

Երբ կը խորհիմ թէ ո՛չ մէկ սէր, ո՛չ մէկ տենչանք մարմինիս մէջ  
Չըխըլլըրտի պիտի այլեւս. թէ ոսկրատուփը ձեռքիս տակ,  
Որ գըլուխս է, որ ես եմ, ե՛ս ամբողջովին՝ գալիք անվերջ  
Գարեբուն մէջ պիտի մընայ հողով լեցուն, ինձմէ դատարկ...

Սոսկում մը նախ զիս կը պատէ ու կը կարծեմ թէ կ'իյնամ վար,  
Մընած օրէս մինչեւ այսօր ինկա՛ծ եմ միշտ ու դեռ կ'իյնամ  
Վիհի մը մէջ՝ որուն յատակն ոչընչութիւն է ու խաւար...

Յետոյ, սակայն, կը խաղաղիմ. կ'զգամ նոյնիսկ յոյս մը արտամ.  
- Ինչալու տեղ կ'ելլե՛մ թերեւս, ու իր բռնէն ազատ հոգիս՝  
Գրկէդ մեկնած, թերեւս, ո՛վ Տէր, պիտի գրկիդ մէջ ընդունիս...

## ԳԱՂԱՓԱՐԱՑ ԳԵՏԻՆԸ

Ինչպէս նաև մը վըբայ փոթորիկի միջոցին՝  
Նս ոտքս ամուր կը կոխեմ՝ բայց կը սահիմ, կը նետուիմ  
Մէկ կողմէն միւսը, աւա՛գ, գաղափարաց գետինին  
Նւ կը խորհիմ թէ կեանքին վերեւ ան շա՛տ է ճգճիմ...

Զըպառկելու համար դեռ — ինչպէս նաև մը վըբայ  
Փոթորիկի միջոցին — կը չափըփեմ շարունակ  
Գաղափարաց գետինին լայնքն ու երկայնքը հիմա,  
Մինչ ան անվերջ կը ծրուի ու կը փախչի՝ քայլիս տակ...

Նւ միշտ՝ ինչպէս աջ ու ձախ, եւ վեր ու վար տատանող  
Կամըջակի մը վըբայ՝ հորիզոնները մտքիս  
Մերթ գլխէս վեր կը ցցուին, մերթ կ'անհետին՝ մըթասքօզ:

Գետին մ'այսքան անհաստատ՝ երբե՞ն անշուշտ կ'ընկնէ՛ դիս.  
Բայց կ'սփոփուի՛մ խորհելով... Թէ մէկ օրուան մէջ՝ մէ՛կ անձ՝  
Նս դարբերո՛ւ, շատերո՛ւ կ'ապրիմ խորհուրդը մէկանց...:

## ԵՐԱՋԻՆ ԾՆՈՒՆԴԸ

Նրէկ գիշեր ես տեսայ, ես տեսայ՝ Քունն իմ վրբաս...  
Անկողնիս շուրջ կը յածէր, կ'ուզէր մարմինս ու հոգիս,  
Թեւեւն անվերջ կը շարժէր եւ միջոցէն մաս առ մաս  
Ամէն սընունդ վանելով՝ կ'ուզէր հիւծել, մարե՛լ զիս...:

Կը կարգայի ու աչքերս ու միտքըս բաց էին դեռ...  
Տարամամօրէն՝ մերթ ընդ մերթ՝ ներկայութիւնը անոր  
Կը գտնէի տողերուն մէջ ըստուերով ծանրաբոս,  
Բայց խեղոյն դուրս կ'ընէի եւ կ'առնէի շունչ մը նոր...:

Մ'հ... դաւաճանը յանկարծ զարկա՛ւ աչքիս կոպերուն...  
Հիմա կըռիւ մը վրբաս, սիրոյ կըռի՛ւ մը անձայն՝  
Որուն մահի՛ճն էի ես, կըռի՛ւ ծըփուն, ծփծրփուն,  
Կատաղօրէն կը մղուէր ընդմէջ՝ Քունին՝ Արթնութեան...:

Եւ ըզզտցի ես ահա՛, բոպէսփայլ լոյսի մէջ,  
Քունը յաղթող Արթնութեան, զայն վայելող հեւ ի հեւ...,  
Մինչ՝ լըբացած այդ կռուէն պիտի ծընէր պահ մը վերջ,  
Երազը՝ փոքր խառնածին, Երազը՝ քո՛ւն արթնաթեւ...:

## ՄՈՒՍԷՈՆ ԱԹԷՆՔԻ

Քարեր միայն, քարե՛ր անթիւ. իբրեւ սիւն,  
Իբրեւ արձան կեանք ըստացած սուրբ քարեր:  
Հողը զանոնք նորէն իր ծոցն էր առեր,  
Անոնք հողէն առին նորէ՛ն յարութիւն:

Մարդոց ծընունդ՝ բայց մարդերէն շատ առաջ,  
Արդարագոյն անոնց սերունդը իբրեւ,  
Անմեղութի՛ւն, գեղեցկութի՛ւն մշտատեւ,  
Վերերեւցան անոնք այստեղ՝ ջինջ ու քաջ:

Եւ յարուցեալ սլայծառ ամբոխ մը հիմա,  
Լուսասպիտակ, անդրանըշոյլ, կը նայի՛  
Հին աշխարհէն մեր աշխարհին ամայի:

Աստուածահոյլ մը բանտարկեալ՝ ցոյց կուտայ  
Այստեղ ճամբան այն միւս ու մեծ աշխարհին,  
Ուր Գեղ եւ Ուժ իբերահաշտ կը բնակին....

## ՎԵՐՋԱԼՈՅՍԻ ԱՄՊԵՐ

Վերջալոյսին, ամպե՛ր, ամպեր՝  
Արեւմուտքէն դէպի վեր,  
Մինչեւ զենիթ՝ յուլօրէն  
Ընկողմանած թո՛յլ ամպեր... :

Արեւը հոն՝ ծոցին ետին,  
Կը յամենայ տակաւին  
Սև ամպերուն կը դրկէ  
Իր փայփայանքը վերջին... :

Օ՛հ, այս մեծ ամպն՝ այս փոքր ծովուն  
Վերեւ ձրգուն, տարածուն,  
Ամէն վայրկեան ձեւափոխ  
Սև առնելով ամէն գոյն... :

Չերմա՛կ թաւիչ՝ որուն վրայ  
Սպիտակ վարդ կը տեղայ,  
Սև կարմիր վարդ, եւ արդէն  
Ոսկեգոյն բուռ մը տալիս... :

Ուրիշ ամպեր՝ որ կը սահին  
Գէպի սահմանն ըստուերին,  
Եւ մերթ ծայրէ մը յանկարծ  
Կը բռնընկին, կը մարին...

Եւ մընացող ու սահանցնող  
Նուրբ քողերուն ու փողփող  
Դիպակներուն այս մէջտեղ՝  
Երկինքի միան հեշտադող...:

Ու երկինքին ներքեւ անձ  
Մո՛ջն որ կարծես կը մըխայ  
Մանուշագոյն շուրին տակ,  
Մեծ հրդեհով մը ոսկեայ...:

Բայց ամպերուն վըրայ տակաւ,  
Ու ծովուն մէջ՝ խաւ առ խաւ  
Կ'իջնէ մոխիրն արեւին  
Որ հոն մեղմիւ ածխացաւ...:

...Ո՛չ մէկ երանգ ա՛լ ամպերէն.  
Թափա՛ծ՝ վարդերը ամէն.  
Երկրնքի մէջ լըռութի՛ւն...  
Ամպերը հոն են ու չե՛ն...:

## ԲԱՅ ԾՈՎՈՒՆ ՄԷՋ

Ես պզտիկ ու մեծ շատ մը սէրերու  
- Արշիպեղազո՛ս- նաւելով մէջէն,  
Առանց ոչ մէկուն քով խարըսխելու  
- Ի՛նչ խենթ, խենթ էի - հասած եմ բաց ծով...

Բաց ծո՛ղն եմ հիմա՝ անհունութեան դէմ  
Լո՛ւռ հորիզոնին, զո՛ւր հորիզոնին...  
Կզգիներն հեռուն նորէն կը տեսնեմ,  
Անոնք, մի առ մի, նորէ՛ն կ'անհետին....

Ո՛չ մէկ նաւ հիմա, ո՛չ իսկ ապառաժ  
Մ'որուն շուրջ գտնայ իմ նաւըս գոնէ  
Կամ ալիք մը զիս հոն տանի, զարնէ....

Ովկէա՛ն անծայր՝ մերթ մըռայլ մերթ խոժ,  
Ու մի՛շտ ամայի... Եւ վերէն՝ միայն  
Ամպեր, լո՛ւռ ամպեր կը սահին կ'երթան...

## ՔԱՌԱՄՆԱՄԵԱԿ

### Ա.

Քառասունին՝ կ'ըսենք ա՛լ. - Կը հեռանաս մենէ, կիա՞նք.  
Ըզգալապէս՝ երեկէն աւելի մութ է այսօր.  
Մինչեւ երէկ լեռն ի վեր ելած էինք, արդ կ'իջնանք,  
Կ'իջնայ մեզ հետ ապագա՞ն ալ յոյսերուն հետ բոլոր...:

Կը կարծէինք, դեռ երէկ, ըլլալ ըսկիզբը ճամբուն.  
Այսօր յանկարծ կը խորհինք թէ կէսն անցած ենք արդէն,  
Լաւագոյն կէսը անշուշտ, եւ դանդաշուն, մոլորուն՝  
Պիտի երթանք ա՛լ յաւէտ հալածուելով այս ցաւէն...:

Յա՛ւր՝ ամբողջ անցեալի, գեղեցկութեանց, ճոխութեանց,  
Նրբ կրնայինք՝ չկրցա՞նք լընուլ մեր կեանքն անոնցմով,  
Հա՛յ մեր այժմու նօթութեան, թշուառութեան դիմաց գա՞նձ:

Քառասունին՝ կը կենանք փրլատակաց դէզին ջով.  
Նոր պալատնե՛ր կ'երազենք, որքա՞ն շրջեզ աւելի.  
Բայց մեզ ոչ ոք չի հաւտար ու չենք հաւտա՛ր մենք մեզի...:

Բ.

Քառասունին, բայց կ'զգա՛նք երէկուրնէ աւելի՛  
Թէ քաղցրը պահը իբ մէջ մեծ քաղցրութիւն մը ունի.  
Լոյսի մը դէմ չենք կենար այլեւս երկար, տեսլահար,  
Այլ վերլուծել կը ջանանք իբ երանգներն անհամար...

Քառասունին՝ երէկի յոգնութենէն այս առտու  
Երբ կը գտնենք մեզ հանգչած ու դեռ պատրաստ քայելու՝  
Հրպարտութիւն մը յանկարծ կը կրկնէ ուժը մերին  
Եւ կարծենք թէ երբեք վերջ չունենա՛ր այս ուղին...

Քառասունին՝ հափափուած հաճոյքներուն տեղ բոլոր,  
Կը վայելենք հեշտանքներ աւելի խոր, միմիայն  
Մէկ բաժակի ումպ առ ումպ ըմբռնչնումին մէջ երկայն...

Եւ այն օրերն՝ ուր ոչինչ մեզ կը ջամբէ կեանքը չոր,  
Ո՛չ իսկ կաթիլ մը գորով, ո՛չ յոյս եւ ո՛չ իսկ պատրանք,  
Իմաստութեան մըրուրով մենք քիչ մը դեռ կ'արբենանք...:

Գ.

Բայց ի՞նչ արագ, ի՞նչ արագ՝ քառասունէն վերջ հիմա  
Կը թաւալին տարիներն՝ իրենց կառքին մեզ կապած,  
Մեզ զարնելով քարէ քար, մինչեւ որ մահն ողորմած  
Ճամբան կանգնի ու փոկին սուրի հարուածը իր տայ...

Այսքան արագ՝ կառքն անշուշտ կը զըլորի՝ լեռն ի վար,  
Այսքան արագ՝ կը քաշէ անշուշտ զայն ձոր մը խորունկ,  
Եւ փոսին մէջ ուր կ'աճին տժգունատիպ մեծ ծաղկունք՝  
Մեզ կ'սպասէ՛, կը խորհինք, քունին հանգիստը երկար...

Քառասունէն վերջ՝ այսօր, մերթ կը սոսկանք այդ քունէն,  
Եւ մերթ անոր կը ցանկանք մեր յոգնութեամբն աւելցող՝  
Փափաքելով յարգարել մեր անկողինը արդէն...

Քառասունէն վերջ, ո՛վ Տէր, կ'ապաւինինք փոխն ի փոխ  
Չըմենանելու դեռ յոյսին եւ յոյսին շուտ մեռնելու,  
Ընդ մէջ հոգւոյն եւ մարմնոյն բաղխումներուն ահարկու...

## ՇՈՒՆ ՄԸ

Մ'ուն մը, շունե՛ր բազմաթիւ, Հովուական շուն՝ մենութեան  
Եւ հրակումի վարժուած, քիչ մը խոժոռ, քիչ մը կոշտ.  
Յետոյ փափուկ, գանգրահեր, մեծ ու պզտիկ, որսական,  
Զուարճական պերճ շուներ՝ որոնց չըսու մարդ մը ՕՇՁ... :

Հովուական շունն անոնց մէջ կ'զգայ ինքզինք կորսուած.  
Թէև յաճախ կը նայի անոնց խորունկ ըղձանքով,  
Բայց քընանալ կը կեղծէ՝ մէկ աչքը գոց, միւսը բաց,  
Եւ քիչ անգամ՝ ահամայ կը շարժէ պոչն անոնց քով... :

Զինք կը տեսնեն՝ զարմացած՝ աղուոր շուներն հեռուէն.  
Ա՛յնքան ուրիշ կը թըւի կերպարանքով, բընութեամբ՝  
Որ կենդանի մը ուրիշ քիչ կը մընայ զայն կարծեն... :

Ոմանք կ'զգան իր ձեւին, ձայնին ներքեւ ապրստամբ՝  
Պահուած գորովը փափուկ, աղապատանքը խորին,  
Բայց հազիւ մօտը եկած՝ տհա կամաց մը կ'անցնին... :

Մինչ ան նորէ՛ն՝ միսմինակ՝ կը փակէ աչքը յուզմամբ... :

## ՏՂԱՔՆԵՐ ԿԱՆ

Տըզաքներ կան՝ որ կ'ապրին մինչեւ քառասուն տարեկան,  
Մինչեւ յիսուն ու վաթսուն, ո՛րքան որ մարդը ապրի...  
Սոսկալի է, սոսկալի՛. ո՛չ մարդն է մարդ, ոչ տըզան  
Տըզայ շատոնց. երկու անձ՝ բընակիչ մէ՛կ մարմինի...:

Երբ ընկերները իրենց կը մեռնէին՝ ապրեցուց  
Գուցէ կարօտ մը զանոնք, չըզոհացած տենչ մը հին,  
Զըզուբցըւած սէր մը քաղցր...: Անցա՞ծ է ժամը վաղուց,  
Բայց անոնք մի՛շտ կ'սպասեն սիրաճաշի զանգակին...:

Մըտածելով պաղարեամբ՝ գիտե՞նք, կ'ըսեն ինքզինքնուն,  
Թէ հընար չէ, հընար չէ...: Մերթ կը խնդան իրենց վրայ,  
Մերթ կը կատղին, մերթ կուլան եւ վերլսաին կը թողուն՝  
Որ սիրան իրենց գէպի ետ փախըստական ընթանայ...:

Անո՞նց, ո՛վ Տէր, զըթու-թի՛ւն: Անոնց համար, Տէ՛ր, գիտե՞ս  
Թէ շունիս ոչ մէկ շընորո՞՛ բաց ի մահուան շընորհէն...  
Թո՞ղ հըրեշտակդ հոգէառ բացառապէ՛ս ըլլայ հեզ,  
Ըլլայ աղուոր եւ թոյլ տայ որ զինք ուժգին համբուրեն...:

## ՆՈՐ ՍԵՆԵԱԿ

Իմ նոր սենեակըս անա՛ չորսի վըրայ հինգ կանգուն.  
Իր տեսարանը ի՞նչ փոյթ, կարասիները ի՞նչ փոյթ.  
Այս միջոցին մէջ ամէն առտու, ամէն իրիկուն  
Պատմութիւններ ինձ պատմէ իմ մատըս ճըկոյթ...:

Եւ մինչդեռ ան կը մեջէ՛ անա յանկարծ, գաղտնօրէն  
Պիտի խօսի՛ հոս ահանջս ու ընդհատէ պիտի գայն.  
Աչքըս պաղի՛ պիտի հոս իր ըսպամանը խորէն  
Եւ պիտի սիրտըս խաղա՛յ ու փոթորկի լըռելեայն...:

Ազատանին եւ պարեն պիտի անթիւ պարիկներ  
Իմ շուքըս, հոս՝ անանուն, ծփծրփուն պար մը ծածուկ,  
Մինչեւ որ գայ ու վանէ զիրենք պառաւ մը շատուկ...:

Եւ հոս, եւ հո՛ս տակաւին, ամենօրեայ խեղճ պատկեր՝  
Քառսուն մանուկ բարեպաշտ, հուրի, սառի մէջ ձըռած,  
Պիտի անվերջ տըւայտին՝ ազօթելով առ Աստուած...:

## ԱՆԿԱՐԵԼԻՆ

Վ'ուզեմ մէկը - ուզելու վարժութիւնն իսկ կորուսեր,  
Կարծես մոռցե՛ր եմ հիմա -  
Որ փոյթ չէ թէ ինձ համար չզգայ ոչ տենչ ու ոչ սէր՝  
Քայց որ իմ սէրըս գիտնայ...:

Գիտնայ՝ գառնուկը ինչպէս զինքը սիրողը գիտէ,  
Գիտէ թռչունն այ ինչպէս,  
Ու կ'որոշէ զայն իսկոյն ուրիշ ամէն մարդերէ,  
Անոր հետ քաղցր է ու հեղ...:

Զըսիրելով հանդերձ զիս՝ երախտագէտ ինձ ըլլայ  
Զինք սիրելուս համար շատ,  
Սիրէ՛ սիրուիլը ինձմէ ու դընէ վիզն ուսիս վրայ՝  
Վստահութեամբ մը ազատ...:

Իմ բառերուս փոխարէն, որոնք մանկան մը ըսուած  
Անուշ բառեր պիտ' ըլլան,  
Ան մերթ ինծի ձեռքն իր տայ և մերթ յուզուած, երկիւղած՝  
Նրկար նայուածք մը միայն...:

Աղուոր չբլայ՝ բայց ըլլայ դեռահասակ ու մաքուր,  
Մաքու՛ր՝ սրտով ու մարմնով.  
Ըլլայ յաճախ ան ուրախ, բայց եւ երբե՛մըն տրխուր,  
Լոյս եւ ըստուեր քովէ քով...:

Փափուկ ու տաք մատներով հըպի՛ երբե՛մըն հողոյս՝  
Նրման վէրքի մը ցաւոտ.  
Ձիս ըսփոփել կամենայ, ինձ ներշնչէ՛ քիչ մը յոյս,  
Գիշերս ընէ՛ առաւօտ...:

Այսքանը բա՛ւ է ինձի, կ'ուզեմ այսքա՛ն միմիայն,  
Եւ գիտեմ թէ՛ չունենա՛մ  
Պիտի այս քիչն ալ հիմա, ... ու մոռցե՛ր եմ ահա զայն,  
Մոռցե՛ր՝ ուզելը անգամ...:

## ՊՈԼԻՍ

Անգամ մըն ալ դուն սեւցա՛ր աչքիս առջեւ, հին պատկե՛ր  
Բլլուրներու մէջտեղէն անցնող ծովուն դարձդարձիկ,  
Որուն կապոյտը կ'առնէ մերթ զմերուխտի երանգներ  
Ու կ'օրրէ մերթ ըսպիտակ ամպը իր մէջ ցոլացիկ...

Օհ, գարնան հողմ՝ այս ջուրին հոտով ամբողջ թաթաւուն,  
Ինչպէս թեթեւ կը թռի ամենուրեք՝ փփրո՛ւն  
Վըրայ անոր եւ բարձանց վրայ ցամաքին եւ ամէն  
Կածաններուն մէջ՝ կայթող իր ոտքերուն հըպումէն....

...Բայց դուն, տեսի՛լք ընտանի, հիմա ա՛յնչափ հեռացած,  
Ըսէ՛, իրա՛ւ է որ ա՛լ պիտի երբեք չըբացուիս  
Դիմացն ըզքեզ փնտրող իմ անսահման կարօտիս...

Դուն որ եղար, ո՛վ Պոլիս, լոյսն աչքերուս նորբաց,  
Ճե՛շտ է, ըսէ՛, որ ա՛լ մենք օտարներ ենք իրարու  
Սւ իրաւունք չունի՛մ ես քու հողիդ մէջ թաղուելու....

## ԱՂՕԹՔ ՀԻՒԱՆԴ ՏՂՈՒ ՄԸ ՀԱՄԱՐ

Չիւանդ, հիւանդ է տրդաս... Այս մըտածումն, ամէն հեղ,  
Զիս կը նեաէ երկընքի դէմ զայրոյթով մը ուժգին,  
Մինչ երկվայրկեան մը յետոյ՝ իմ անկուսիս մէջ անեղ  
նս կը մընամ շնչասպառ, սեղմած իմ վէրքըս ներքին...

Տըղաս հիւանդ...: Տէ՛ր, ներէ՛: Միայն աղօթք, աղաչանք,  
Արտասուախառն, հոգերուիս աղօթք ունիմ քու առջիդ,  
Միայն աղօթք, ո՛չ բողոք, որ շընորհես իրեն կեանք,  
Որ առնէ կեանքն ալ իբժէ շընորհ՝ ու փայլ ու ժըպիտ...

Իբաւ է թէ իղձը մերն ու կամքը քուկդ է, Աստուած,  
Գուն չես դործեր մեր մտքով, սակայն ներէ՛, օ՛հ, ներէ՛  
Որ յիշեցնեմ թէ ո՛րքան անցնելով մեծ մութերէ՛

Սկած հասած էր այստեղ, արեւին տակ էր հլած,  
Թէ իր հոգին ու իր միտքն ի՞նչպէս ճօխ են ու փարթամ  
Նւ թէ ի՞նչպէս հեռուէն ես իր վըրայ կը դողամ...:

## ՀԱՇՈՒԵՅԱՐԴԱՐ

Պաշուեյարդար. Ի՞նչ մընաց, կեանքէն ինծի ի՞նչ մընաց,  
Ինչ որ աըւի ուրիշին, տարօրինակ, ա՛յն միայն.  
Պանդադատանք մը ծածուկ, օրհնութիւններ անխմաց,  
Երբեմն հասնումը սրտիս ու մերթ արցունք մը անձայն...

Ինչ որ գընաց ուրիշին՝ վերադարձաւ անուշցած  
Ու դօրացած՝ հոգիիս մէջ մընալու յաւիտեան.  
Ինչ որ տարաւ Սէրն ինձմէ՝ չըկորսընցուց զայն Աստուած,  
Տըւաւ ինձ ետ ու ըրաւ կեանքըս անով միշտ բուրեան...:

Եւ այժմ, ո՛վ Տէր, հակառակ իմ տանջանքիս, հակառակ  
Ինծի համար սա՛ չորցած երջանկութեան աղբիւրին,  
Հին գինիով յորդարուի ես կ'արբենամ տակաւին...:

Ու չեմ ըսեր «Ի՞նչ մընաց...» Ի՞նչ կը մընայ հողին տակ  
Եղէգներէն դիւբաթեք, կաղնիներէն հաստաբուն.  
Արեւն ըմպած ըլլալու մըխիթարանքը անհուն:

## ԵՐԷԿ ԳԻՇԵՐ

Երէկ զիշեր - չեմ գիտեր երէ՛կ էր ան՝ թէ երազ -  
Սիրոյ մօտէն ես անցայ, եղայ ա՛յնքան մօտ, ա՛յնքան՝  
Որ, ա՛հ, դըպա՛յ իսկ անոր ու ան փախաւ հազիւ հազ  
Նւ դեռ մատնեցրս կարծես զլիու պըտոյտ կ'ունենան...:

Երէկ զիշեր՝ անսահման ուրախութեան ի հաշիւ  
Ես ժողվեցի իրական, անմահական փշրանքներ,  
Որոնց վրայ մըտածումս, ըզգայարանքըս հեշտի՛ւ  
Կը մընան այժմ առկախ՝ ջահերու պէս տարուբեր...:

Երէկ զիշեր երջանի՛կ եղայ միայն այդքանով,  
Երազն ու կեանքը մութին մէջտեղ եկան քովէ քով,  
Կեանքս երազս՝ վ յորդեցաւ, ինչպէս երազս ալ կեանքով...:

Նւ այսօր բեռ մը կարծես հողիս մէջ կը տանիմ,  
Հողիս մէջ ու մարմնո՛յս՝ բեռ մը զազանի, մըտերիմ,  
Որուն տակ մերթ կը հեւամ եւ մերթ անո՛վ կը թըռիմ...:

## ԱՅՍ ԵՐԱԶԸ

Պիտի քալե՛մ յաւիտեան այս երազին ետեւէն,  
Ուր որ ըլլամ, ո՛ր աստղին կամ ո՛ր ամպին ալ ներքեւ,  
Սիրտըս ուրախ թէ տըխուր, քայլերըս ծանր կամ թեթեւ,  
Շուրջըս ամպրոպը գոռայ թէ զեփիւռները թեւեն...

Եյս երազին ետեւէն պիտի քալե՛մ յաւիտեան,  
Հիմա, աւա՛ղ, գիտնալով թէ զայն պիտի չը բռնեմ՝  
Բայց տենչալով այդ տեսիլքն իմ անցեալիս քաղցրադէմ  
Հետըս յաւէտ ունենալ, անով երթով գ՛րեզման...

Անով՝ անցեալն ինծի հետ, իմ առջեւէս կ'ընթանայ  
Ու կ'ըլլայ միշտ ապագայ ու զայն կ'ընէ ցանկալի.  
Անոր սառին վրայ իբրեւ շող մ'արեւի կը փայլի...

Այդ երազին ետեւէն այս ըռպէին ալ ահա՛  
Կը հեւայ սիրտըս ա՛յնքան՝ որ զայն գրկա՛ծ եմ կարծես,  
Որ կը խորհիմ թէ արդէն ես սիրուա՛ծ եմ իմ սէրէս...

## ԱՆՈՆՔ

Մէկո՛ւն՝ հողին տեսայ ես  
Ու սիրեցի՛ ձեւերէն  
Ու քայլերէն՝ որ կ'ելլեն,  
Կարծես միշտ վե՛ր աշխարհէս....:

Մէ՛կն՝ իր ձայնին նուազով  
Զիս քընացուց 'ւ արթընցուց,  
Զա՛յն ջուրերու հինաւուրց,  
Հեղամբումնջ, թարմ ու զով....:

Յետոյ մագերը մէկուն  
Սենթեցուցին պահ մը զիս՝  
Բանած իրենց մէջ հողիս...

Բայց ուրիշ մը ժպտուն  
Աչքերն ախքան քաղցը էին՝  
Որ հիւս՛նդ եմ տակաւին....:

ՈՉ ՈՔ

Ոչ ո՞ք նորէն այս գիշեր,  
Ոչ ո՞ք որ զիս լլսէր գէթ,  
Որ քեզ մը զիս գուշակէր,  
Որ, ո՛վ գիշեր, հըմայքէր

Ինքն ալ ինձ պէն բռնըւած՝  
Ըլար տաւիզ մը թրթռուն  
Եւ իմ տենչանքս երկիւղած՝  
Ըլար հո՞գն իր լարերուն...

Ո՛չ ոք... ի գո՛ւր կը հեղուս  
Անհուն գիշեր, քու խորունկ  
Սիրոյ սափսրըդ գլխուս...

Ի գո՛ւր, ո՛վ սիրոս, իրբեւ խունկ  
Կը յամառիս հոս գուն ալ  
Ամայութեան մէջ մըխալ...

## ՄԵՆՈՒԹԻՒՆ

Ո՛չ մէկ բարեկամ... Ու սիրտս ա՛յնչափ բան  
Ունի բսելիք՝ ծանրը ու թեթեւ,  
Այնչափ բան՝ որոնք բերնի վրայ կուգան  
Երբ լըսող մը կայ, ներո՛ղ մը նաեւ....

Հողույս մէջ ամէն ըզգացում, խորհուրդ,  
Զրպարզըւելով կը փտտի՛ կարծես...  
Զըխօսող հոգին ա՛յնքան կ'ըլլայ ցուբտ,  
Գառնացած՝ սառէն՝ նարինջի մը պէս....

Ո՛չ մէկ բարեկամ... և սակայն գիտե՛մ  
Թէ կան շուրջրս, հոս, անհամար ցաւեր՝  
Սրտերու մէջ լուռ, նրման ու տարբեր...:

Զընանչնա՛լ իրար... միշտ գա՛լ դէմ առ դէմ  
Եւ անցնի՛լ՝ առանց երբեք իրարու  
Քիչ մ'ըստիս, նեցուկ կամ յոյս ըլլալու....

## ԱՏԵՆՕՔ

Ատենօք հունա մը յոյսի՝ հոգիիս մէջ կը բանար  
Ուրախութեան ծառ մը մեծ...: Լուսածաղիկ, լուսավառ  
Աչք մը՝ սուգուած աչքիս մէջ, ձեռք մը ձեռքիս մէջ թողուած,  
Կը վազընէր՝ հեւ ի հեւ սանձակոտոր սիրտս յանկարծ...:

Բայց խենդ սրտին ետեւէն կը հասնէր միաքը խելօք,  
Միաքը խելօ՛ք, խելացի՛ր, եւ ինչպէս Զեւան ատենօք  
Պըրմեթէն ապըստամբ՝ զայն կը զարնէր շղթայի  
Ու կը ձրգէր զայն մինակ, իր ժայռին հետ ամայի...:

...Կը յիշե՞ս ձեռքդ այն գիշեր, այնտե՛ղ, դարձին այգիէն,  
Մէջքիդ վըրայ, ձեռքիս տակ թռչունի պէս դողացող...  
Եւ կը յիշե՞ս խաւարին մէջ շիթ առ շիթ՝ լուսաշող  
Ինկող բառերը մերին, ու հառա՛չդ ալ տարօրէն...:

Այդ փափուկ պահը կեանքիս մէջ կը մընայ՝ տակաւին,  
Մեռած կեանքիս մէջ մեռած աղաւնիի մը նըման,  
Որ կը ֆեջէ՛ ընդմէջէն իր կիսաբաց կրտուցին՝  
Իր բացակայ ընկերոջ շա՛տ անուշ բան մը...: Ի՞նչ բան...:

## ՅԻՄԱՐԻ ՊԷՍ

Ահաւաստիկ որ կը խորհիմ, յիմարի՛ պէս,  
Մեղստեղծութեամբն այս գիշերին կախարդական՝  
Թէ դուն կրնաս, թէ դուն թերե՛ւս պիտի ուզես  
Ինծի իջնել՝ ինչպէս հորին մէջ լուսընկան...:

Աչքըդ տչքիս մէջ բարութեամբ պիտի լընո՛ւս,  
Պիտի թողո՞ւս ձեռքըդ ձեռքիս, ծունկըդ ծունկիս,  
Պիտի զիսնա՛ս թողմի՛ն ամէն իմ իղձերուս  
Եւ անոնց վրայ դուն իբրեւ ցօղ պիտի սահի՛ս...:

Ինչ խենդ երազ, ի՞նչքան անգամ սուսերահար  
Ձոր նայուածքէ ու շարժումէ, շեշտէ մ'հատու,  
Մի՛շտ վերածնող, դատապարտուած մի՛շտ մեռնելու...:

Թոյլ տո՛ւբ սակայն որ ան մեծնայ քե՛զ ալ համար,  
Հասակէդ հասկ, գեղեցկութիւն առնէ գեղէդ  
Եւ պատկերիդ շրջեղծութեա՛մբը մեռնի գէթ...:

## ՎԵՐԼՈՒԾՈՒՄ

Քեզ բարեւել ու խօսի՛  
Այսօր կամ վաղը, է՛ն ուշ,  
Զարմացումէդ օգտուի  
Եւ ըսել բառ մը անուշ...

Աբազօրէն, ատկէ վերջ,  
Նըկարագրել քեզ քեզի՛  
Ա՛յնպէս ինչպէս սրտիս մէջ  
«Քու»կըդ «իմ»ով կը գծուի...

Ի՛մ երազներս, ի՛մ հոգիս՝  
Աչքերուդ մէջ ցոլացած,  
Կարդալ ինչպէս գիրք մը բաց...

Մինչեւ որ դուն քեզ հանիս,  
Մինչեւ որ դո՛ւն ալ ինձ պէս  
Ըզջե՛ր իմ մէ՛ջըս սիրես...:

## ՍԱԼՈՐԵՆԻՆ

Մեր պարտէզն էր հորի նրման,  
նեղ ու ցածուկ... Բարձրը պատեր,  
Պատին զբուսած սանդուղ մ'երկար՝  
Ուրիկէ՛ մանուկ՝ կ'իւլէի վեր...

Եւ ճիշդ մէջտեղը պարտէզին  
Սալորենի մը կար ամուլ...  
Սալորենի մը՝ կ'ըսէի՛ն...  
Կարծես աղջիկ մը համբ ու խուլ...:

Միակ ծառն էր, Ամէն ճրմեռ  
Կը կարծէի թէ վերջնապէս  
Զորցած է ան. գարնան հետ դեռ  
Ան կը բացուէր՝ յոյսով կարծես...:

Անգամ մը զայն պատուաստեցին  
Բայց չըբըռնեց պատուաստը վրան...  
Դեռ կը խորհիմ ես այդ ծառին...  
Մանուկն անո՛ր եղաւ նրման...

## ՀԱՃՈՅՔ

Մեզնի պատիկ հաճո՛յք, ահա վերջացար  
Եւ ուզեցի ե՛ս՝ որ շուտ վերջանաս...  
Երա՛զս էր ըզքեզ հեշտիւ, յամբարար,  
Հագուազիւտ խորտի՛կ՝ խորել մաս առ մաս...

Մինչ՝ հալածական գազանը ինչպէս  
Իբ որսն անտառին կը տանի մէջտեղ  
Եւ կը հափափէ զայն արագ, անտես՝  
Այնպէս լափեցի քեզ, թռչնի՛կ համեղ

— Եթէ ոչ անմեղ — քեզ լո՛ր կամ կաքա՛ւ,  
Քեզ, պատիկ հաճո՛յք, հատցուցի՞ ահա...  
Եւ խաղաղութիւն մը կ'իջնէ հիմա

Մարմնոյս մէջ ինչպէս մտքիս ալ տակաւ...  
Միայն սիրտս, ինչո՞ւ, քաշուեր է մէկզի՛  
Նրման քէն ըրած արդո՛ւ մ'անօթի...:

## ԵԳԻՊՏՈՒՀԻ

Իմ թուխ հրեշտակըս ազուար՝ իմ ըսպիտակ, լուսափայլ  
հրեշտակներէս վերջ այնքան...; զերդ ջահ մը սեւ յասպիսէ  
Պուն կը շողաս եւ լոյսիդ մէջ կը մընամ հողեզմայլ՝  
Գիշերազնաց զերդ ճամբորդ մ'որ շուրջն յանկարծ կը տեսնէ...

Այդքան անուշ ջերմութիւն նայուածքիդ մէջ ու ժպտիդ,  
Ու հասակիդ մէջ այդքան լեցուն, ճրկուն ճոխութիւն,  
Մարթիդ խաւար բուրումին, ձայնիդ շեշտին հետ վըճիտ՝  
Ձիս կը խեղդեն հեշտութեան աւազներու տակ ծրփուն...

Շաքարեղէզ մը ինչպէս գետեղերքէն կարուած,  
Քեզ կը տանիմ՝ դալարած, դաշնաւորուած ալ քեզմով,  
Քեզ՝ քաղցր անոր պէս ետքէն, անոր պէս կա՛րծըր ու գով...:

Եւ կը խորհիմ. — թերեւս հին աստուածուհի ու աստուած՝  
Ճապուկ եղնիկ մը ճերմակ, սեւուլիկ ցուլ մը ուժեղ,  
Միացած են ու եղած նախածընողքրդ այստեղ,

Ձի կենդանւոյ մը պէս սուրբ քեզ կը պաշտե՛մ երկիւղած..

## ԻՒՍԿԻՏԱՐ

Իմ գիւղըս, մի՛շտ, իր լայն ու լոյս երկինքով,  
Իր արտերուն յըզութիւնովը հանգարտ,  
Մանկութիւնովն աղբիւրներուն իր թոթով  
Ծւ լեռներուն լըջութիւնովը զըւարթ,

Ուր որ երթամ կը դառնա՛յ շուրջը մտքիս,  
Մովահայեաց ճամբաներուն մէջ իրեն  
Մերթ կը բռնէ յոգնած աչքերս ու հոգիս,  
Մերթ կը փըշէ՛ երեսիս հով մ'իբ հովէն...

Իր տըզոցմով գիւղըս կ'անէր ու կ'երգէր,  
Կը սարսըռա՛ր իր սէրերով ծաղկաւէտ,  
Կ'օրհնաձայնէ՛ր իր ծերերուն շրթանց հետ...

Իմ գիւղըս, Տէ՛ր, արդեօք ի՛նչ զով զեփիւռներ,  
Հով արեւներ, ծով ըստուերներ կը տեղայ  
Իմ հոն թողած, իմ հոն թաղա՛ծ սրտիս վրայ...:

## ՍԷՐԸ ՏԱՍՆԸՎԵՑ ՏԱՐԵԿԱՆԻՆ

Ազբիւրը նոր է բղխեր, ժայթքեր խորշէ մը անտես,  
Եւ արշալոյսն անոր մէջ իր հեռուի լեռներով  
Ու ծառերովը մօտի կը ցոլանայ գաղտնապէս  
Եւ հովիւ հազիւ թէ գանի կը փոթփոթէ, անո՛ւշ հով...

Կ'երթայ ազբիւրն եւ կ'ուզէ մամուռներու եւ ծաղկանց  
Ներքեւ պահուիլ աւելի՛ քան թէ շողալ արեւուն...  
Պզտիկ տերեւն որ կ'իյնայ վերէն իր մէջ՝ կ'ըլլայ գանձ  
Մը դոր պահել կը փորձէ խիճի մը տակ սրբփուն...

Մէ՞կը արդեօք ճամբուն վրայ գըլորեց կոյտ մը հողի,  
Թէ լերան մութ ծոցին մէջ ուր կեանքն իրեն կը ծընի՛  
Անցաւ սպարիկ մը պզտիկ ու լրաց պորան իր ախտեղ...

Ազբիւրը այժմ, ինքնիրեն, յանկարծակի՛ կ'ուռենայ,  
Ալիք-ալիք կը դիպուի՛, կը բարձրանայ՝ ինքն իր վրայ  
Եւ կը ցանկայ՝ շուքին տեղ՝ գրկել բարտին սա շրջեղ...:

## ԾԱՌԻ ԾԱՆԿԱՆԵՐ

Մառի փափուկ ծաղիկնե՛ր, ես աւելի փափկօրէն  
Սիրած եմ ձեզ, ըսկըսեալ մանկութեանս հին օրերէն՝  
Քան ձեր քոյրերը զեանի՝ ածունեբու մէջ ծաղկող,  
Թաղարնեբու մէջ բացուած, շարուած կարգով, տող առ տող  
Որոնցմէ փունջ կը կազմեն, որոնց բոյրով կ'արբեհնան...

Կը յիշեմ, ո՛վ բարեկամ, ձեր պարտէզին՝ որ մեր տան  
Կը վերջանար ճիշդ դիմաց, նըշննիները երեք:  
Բարձրը պատին ետեւէն .. որ մերթ կ'իջնար յոգնաբեկ,  
Ծանրութենէն թաց հողին՝ որուն էք ինքն ամբարտակ -  
Փետրովարի վերջն արդէն, անոնցմէ մին ըսպիտակ  
Եւ միւս երկուքը կարմիր, ծիրանեգոյն աչուկներ՝  
Ձոր ստերուն երեսէն կը բանային անհամբեր...  
Այնուհետեւ ի՛նչպէս շուտ կ'աւելնային ծաղիկներն  
Ու երկընքի լուսափայլ նուրբ կապոյտին մէջ՝ հոն վե՛րն,  
Կը մըխային այդ ծառերն՝ երեք ծաղկած նըշննի,  
Մէկը ճերմակ ծուխի պէս եւ միւս երկուքը՝ բոցի:

Մառի թեթեւ ծաղիկնե՛ր՝ ստորենւո՛յ, նըշննւոյ,  
Նըման էիք դուք սիրոյս ծաղիկներուն՝ որ յանկարծ  
Կը բացուէին երազի երկընքին մէջ ու յետոյ  
Կը թափէին, մի առ մի, վերէն՝ զեանին վըբայ ցած...:

## ՅԻՍՆԱՄԵԱԿ

Կը մօտենայ յիսունն ալ, հսկայաքայլ՝ առջեւէն  
Ձբգած իր շուքը արգեղ, ծաղրանըկա՛րը անոր՝  
Ձոր իմ յոյսիս եւ յուշիս պատերը դեռ կը պահեն  
Բանասարկըւած իրենց մէջ, ծընած, չիշխա՛ծ թագաւոր...

Յիսունն ահա՛ տհաղին ծառի մը պէս կը կանգնի  
Ու կը գոցէ ա՛լ ամբողջ իմ հորիզոնս իր ետեւ...  
Բունն է փորուած, պարպըւած. կը բընակի հոն գաղանի  
Թռչուն մը որ արծուի աչք եւ չղջիկի ունի թեւ...

Յիսունն հիմա՛ լուսարար: Պատարագէն վերջ՝ ի՞նչ փոյթ  
Թէ կը մընան ժամուն մէջ քանի մը կին ու արդայ.  
Մն՝ լըռաքայլ՝ մի առ մի մարել ջահերը կուգայ...

Բացի մէկէն, լուսարա՛ր. թող գայն՝ ի սէր արեւուդ.  
Ժամերպութիւնն իրիկուան ի՞նչպէս ընել, ա՛հ, թո՛ղ գայն.  
Ի՞նչպէս առանց այդ յոյսին մտնել բաւիղը մահուան...:

## ՋՈՒՐԵՐՈՒՆ ՎՐԱՅ ԱՏՈՒԵՐՆԵՐ

Ջուրերուն վրայ ըստուերներ դանդաղօրէն կը յառնեն,  
Մեկնումէն ետք արեւին, ջուրերուն մութ յատակէն....

Հեռուն՝ ծովերն ու լիճերն ու հոս՝ գետերը բոլոր,  
Պարտէզներու մէջ փորուած աւազաններն իսկ կըլսոր  
Իրենց վերեւ կը տեսնեն՝ զերդ մըշուշի մը ծըփուն  
Պատառիկները թեթեւ կամ զերդ շուքերն ամպերուն  
Անցնող արտին երեսէն՝ անթիւ, անվե՛րջ ըստուերներ,  
Որոնց ամէն մէկն ահա՛ իր շարժումովը տարբեր  
Կը մօտենայ միւսին, կը ծըռի վար եւ հազիւ  
Միայն ըսպէ՛ մը առկախ՝ կը թօթուրւի եւ մեղմիւ  
Կը հեռանայ, կ'անհետի....

Իրիկուան լուրջ այդ պահուն  
Կ'երգե՞ն ջուրերը կարծես, անլրսելի եւ անհուն  
Ե՛րգ մ'որ իրենց ներքեւէն կը բարձրանայ յամբարաբ,  
Կարօտի ն՛րգ մը ծառին, ծաղկին, խոտին ալ համար,  
Որոնք, անշունչ ու անշարժ, մըտիկ կ'ընեն անձկազին՝  
Ջուրերու մէջ խեղզամահ հոգիներու այդ երգին...:

## ԹԻԹԵՌՆԻԿ

Քերթուած մըն ալ, ճիշդ հիմա,  
Թիթեռնիկի մը նըման,  
Պիտի ծակէ ու դուրս գայ  
Առազաստէն ըզգացման...

Իբ իբըրտումը կ'զգամ,  
Կը տեսնեմ շուքը ներսէն,  
Ծն ճիշդ ժամուն, լուսոյ ժամ,  
Ան օդին մէջ է արդէն...:

Այուտ'ը թիթեռ, խեղճ խոզակ'  
Որուն մեաքան է խզուած...  
Խորհուրդը մութ ու յստակ  
Պղծեցիք դո՛ւն, ս'վ քերթուած...

Գննէ թիթեռն այս ապրէ՛ր.  
Բայց կը մեռնի քիչ յետոյ...  
Երնէ՛կ թողուր ան սերմեր  
Սիրտերու մէջ՛ նո՛ր սիրոյ...:

## ԼԻԻՔՍԱՆՊՈՒՐԿԻ ՊԱՐՏԷԶԻՆ ՄԷՋ

Պարունն ահա՝ վերբարտին,  
Ծառերուն վրայ բաց-կանաչ՝  
Թիթեանիկներ կը թափին  
Եւ թրթուրներ կապալանջ...:

Եւ ծառերուն տակ ահա՝  
Պատիկ տրղաք կը վազեն  
Իրենց մօտիկ հողին վրայ,  
Իրենց ձայնին ետեւէն...:

Եւ պարմանին՝ որ երէկ  
Մանուկ էր դեռ անոնց պէս,  
Այսօր կեցուածք մ'ունի սէզ,  
Նոր բացուող ծա՛ռ մ'է կարծես...:

Պարմանուհին ու կինն ալ,  
Քայլով, ժպտով մ'երազուն,  
Կարծես ճամբէ մը ծաղկեալ  
Կը մտնեն դրա՛խտ մը թաքուն...:

ԾՈՎԱՓ

Արլացիկ, մաքուր,  
Մաքրութեամբ մ'որ դուրս  
Կը զեղու եւ ուր  
Կը մըխայ զըմուռս՝

Ծովափէն կ'անցնի՝  
Եւ ծովն իր ետեւ  
Կ'ըլլայ աւելի  
Կապոյտ ու թեթեւ...

Կարծես թիթեռէն  
Քայլին չափն առեր՝  
Կ'իջնէ, կ'ելլէ զեր...

Եւ իր հետ կ'ելլեն,  
Կ'իջնեն հողիէս  
Ալիքնէ՛ր կարծես...

## ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

Եթէ կրնաս՝ բարձրացի՛ր, բայց զիտե՛ս ո՛ւր, մինչեւ ո՛ւր,  
Ծւ քեզի հեա ուրիշներն՝ եթէ կրնաս՝ բարձրացո՛ւր,  
Բայց մինչեւ ո՛ւր, մինչեւ ո՛ւր...

Հաւատալով թէ կրնաս՝ ո՛ն, բարձրացի՛ր, քա՛ղ տըղաս,  
Սակայն քանի վեր ելլես՝ պիտի մըսիս ու դողաս,  
Մընաս մինա՛կ, խե՛ղճ տըղաս...

Կարենայի՛ր դուն եթէ բարձրացընել քեզի հեա  
Միրուած քանի մը հողի մինչեւ գազաթն արգիտէտ,  
Մինչեւ սե՛րը քեզի հեա...

Կարելին այդ է միայն, անըրջակա՞ն կարելին,  
Բարեկամեն՛ք՝ որ մէկտեղ կ'ուզեն, կ'զգան, կը խորհին  
Անկարելին, կարելին...

Միմիայն ա՛յս, մընացեալն ամբողջ պատրանք է, հողի՛ս,  
Միմիայն ա՛յս, ու անոր զուցէ երբե՛ք չընաննիս,  
Անոր իզձո՛վը մեանիս...

## ԳԱԼԻԼԻԱԿԱՆ

Պալլիլիական այս հրնաշող աստղերուն  
Ներքեւ հողիս կը սարսըռայ այս գիշեր...  
Հո՛ւ էր ուրեմն որ շրջեցաւ սէրն անհուն,  
Ծրկիրն ամբողջ, երկի՛նքն անգամ դիւթող սէր....

Ո՛վ Վարդապետ, յաւերժական լիութի՛ւն,  
Քու անձրդ հոս բնութիւնն համայն է լըցեր.  
Քեզ փայտայած շունչեր կան խորն այս հովուն,  
Այս հողին մէջ կան Քեզ զըպած հիւլէներ....

Լեռնե՛րն ահա ու ճամբանե՛րն՝ որոնց վրայ  
Գուն այսպիսի լուռ գիշերներ խօսեցա՛ր,  
Ու ձայնրդ դեռ կը թրթրոյ այ ու կ'երթայ....

Որդի՛ մարդոյ, այս այն երկինքն է պայծառ՝  
Որ Քեզ տեսաւ, լըսեց, սիրեց Քեզ տակաւ...  
Ու բացուելով Քեզ իր ծոցին մէջ առաւ....

## ՀԱՌԱԶԱՆՔ

Ես ալ յ Քեզմէ Քեզ կ'երթամ ու կը ճըչեմ, կը պոռամ...»<sup>9</sup>  
Ես ալ յ Քեզմէ Քեզի դէմ միշտ օգնութիւն կը խնդրեմ...»<sup>10</sup>  
Պատիժն ես Դուն՝ ու վարձքն ալ, Դո՛ւն՝ թշնամի-բարեկամ,  
Որ կ'ընծայուիս իբրեւ հաց, կը կարծրանաս իբրեւ վէճ...

Կը հեռանաս Դո՛ւն արդեօք՝ թէ կը փախիմ Քենէ ես  
Նրբ կը գտնեմ զիս մութին, մոլորանքին մէջ խրրած...  
Սակայն՝ սոսկո՛ւմ եւ հըրա՛շք՝ մեղքէն ալ դուն կը յառնես  
Եւ աւելի ինձի մօտ անոր մէջն ես, ո՛վ Աստուած...:

Իմ անցեալէս ապագաս նետուած կամուրջ մըն ես մերթ  
Որուն անեզ կամարին ներքեւ ներկաս է անդունդ,  
Որ չի՛ տեսներ քու ազեղդ, ոչ ալ կ'զգա՛յ քու սիւներդ...:

Բայց այդ վիճին մէջ ի՛նչպէս կուզայ իյնալ մերթ անունդ  
Ու մինչեւ Քեզ կը լենա՛յ, կը բարձրանա՛յ վիճն ամբողջ,  
Ա՛հ, Քեզմէ Քեզ կտարելո՛վ կ'երթան ծունկերըս դողող...:

<sup>9</sup>, <sup>10</sup> ձէլալետտին Բումի՝ առ Եճմետտին, յիշուած Մոսիս Պառլսէ:

## ԳՈՒԲԸ

Պիտի կրնա՞մ, Աստուած իմ, ես որ քու լոյսդ է՛ր երբեմն  
Նշմարեցի, գեռ շինկած այս գուրին խորն՝ ուր անվերջ  
Կը զարնրւիմ պատերուն եւ կը սուգուիմ տիղմին մէջ,  
Պիտի կրնա՞մ անկէ դուրս ելլել, հասնի՛լ անոր սեմն...

Պիտի կրնա՞մ ես ցոյց տալ Քեզի իմ սիրտս՝ որ անոր  
Վըրայ նայուածք մը թողուս եւ զայն ընես յաւիտեան  
Ճաճանչաւուխտ՝ ինչպէս ջահ մը ձեղունէդ գրթութեան  
Կախուած մութին վրայ շուրջի եւ քու շունչէդ հեշտօրօր...

Պիտի կրնա՞մ, Դուն այս յոյսն ինձ կը ներես հիմա, Տէ՛ր,  
Միայն ինքզինքս յանձնելով քու ազգումիդ՝ յամբօրէ՛ն  
Բարձրանալ հոն ուր ըզՔեզ պիտի գանեմ ես նորէն...

Եւ կը թըւի ինձ արդէն՝ թէ գուրն ուրիշ ոչինչ էր՝  
Բայց թէ մարմինըս խաւար, եւ թէ հոգիս այժմ ահա՛  
Իր բանտն իր հետ քաշելով՝ առ Քեզ տակա՛ւ կ'ամբաւնայ...

## ԿՉԳԱՄ 1130

Վ՛զգամ, Աստուած իմ, կ՛զգա՛մ՝ որ տակաւ ձեռքըդ ինծի  
Կը մօտենայ եւ կ՛ուզէ բռնել եւ վեր հանել զիս,  
Կ՛ուզէ հոգւոյս երեսէն քաշել պատանքը մէկդի  
Եւ ողողել զայն նորէն հաւրովը հին հաւատքիս...

Կ՛զգամ, այո՛, բայց որքա՞ն խառնակութիւն տակաւին  
Ամենուրեք խոհերուս եւ իղձերուս ալ մէջտեղ...  
Հայր իմ, հընա՛ր է միթէ, կը հարցընեմ անձկազին,  
Որ այնպէս հետըս վարուիս՝ ինչպէս տրդուն հետ անմեղ...

Բայց Դուն անշո՛ւշտ զիս վերէն աւելի լաւ կը տեսնես...,  
Բայց իմ քսոսս անշուշտ լո՛յս է քու աչքիդ, ով Մընոզ  
Արեւնեբուն ըլւրաւոր եւ ո՛վ Հսկող խորատես...:

Ու ի՞նչ հրճուանք է, ո՛վ Տէր, իմ ցաւերուս մէջ մաշող  
Այս դեռ տրկար, դեռ հագիւ պլպլուն յոյսը հիմա՝  
Թէ լքուած չե՛մ վերջնապէս, թէ սէրըդ զիս կը հոգա՛յ...:

## ՈՐՈՆՈՒՄ

Իմ հողիիս մէջ ըզՔեզ կը վնտըռեմ այս առտու  
Եւ չեմ, ես չե՛մ գտներ Քեզ: Տէ՛ր իմ, ս՛ւր ես, Տէ՛ր, ինչպէ՛ս  
Պարպեր ես զիս քու շունչէդ, ա՛յնքան որ Քեզ կանչելու  
Ուժն իսկ չունիմ եւ կ'իջնա՛յ անունըդ վար շրթներէս...

Քայց այս պահանջը միայն, բայց այս մրմունջը տըկաբ՝  
Իմ վըրաս յոյս մը թեթեւ, լոյս մը ազօտ կը ծագեն...  
Այո՛, գիտե՛մ թէ կաս Դուն եւ պահ մ'իջնծի երեւցար  
Ու որոնումըս այսօր քու ապացոյցդ է արդէն...:

Շընորհ ու վարձք՝ ես երբեք ունեցածէս աւելի  
Զըխընդրեցի ինձ համար եւ Քեզի լոկ գիմեցի  
Խորութենէն մերթ ցաւիս, այլոց ցաւին համար մերթ...

Եւ եթէ Քեզ վերջապիւն կը վնտըռեմ հիմա, Տէ՛ր,  
Գիտե՛ս անշուշտ Դուն պատճառն ու ես զայն գեռ չե՛մ գիտեր.  
-Գիտի խոցե՛ն գուցէ զիս նորէն քու շար ոգիներդ...:

## ՇՈՒԱՐՈՒՄ

Աստուած իմ, եթէ կարելի չէր որ  
Ամէնքն ըլլային սափոր օրհնըւած՝  
Լեցուն բարութեան գինիով հրգօր,  
Ընէի՛ր ամէնքն իրարու դիմաց

Պողպատեայ վանան, եւ թոյլ շրտայի՛ր  
Որ տրկարը միշտ, ա՛ն ալ քու որդիդ,  
Իյնա՛յ եւ արեան իր քօղով կարմիր  
Մածկէ՛ ամբշցող մարմինն իր վըտիտ....

Բայց չըբի՛ր այգուէս... Կ'ըլլան ոտնակոխ  
Ուժովէն՝ նըւազ ուժովներն ամէն  
Եւ կը դարնըւի՛ եղբայրն եղբօրմէն....

Ի՛նչ խորհուրդ է այս. մարդ մարդու ստի  
Եւ Գուն յաւիտեան տրկարին ընդդէմ...  
Աստուած իմ, ի՛նչպէս ըզ՞իեզ ըմբռնեմ....

## Յ Ա Ն Կ


---

Երեւ Ջօն	52
Ա. Ասուծոյ	5
Բ. Հայ Ազգին	6
Գ. Ընթերցողին	7
Ըմբռստութիւն տրագան	8
Կենդանութիւն հայրենի	11
Գեղօն հայ որրին	15
Ռրբերուն ձեռները	17
Գործու որբերու	18
Ռրբերուն աղօթքը	20
Ռրբ - իշխան	21
Մութ ժամեր (Ա.—Ք.)	22—30
Եկեացք	32
Ով Հայաստան	34
Եկեղեցին հայկական	36
Ս. Կարապետ Կեսարիոյ	38
Հօտ եւ Հովիտ	40
Հայ հողիին	43
Խօսք մեծերոց	44
Խորհուրդ Վարդանանց	46
Տաղ Գրաբարին	48
Կամուրջ	49
Դառն աղօթք	51
Փոշի-ազգ	52
Ներկայ Հայաստանին	53
Երեւ կոչերը	54

Պատկեր	Էջ 55
Տկարութիւն	56
Մեծ հովեր	57
Հուր ստեղծիչ	58
Պաւարում	59
Տիրան Չրախան	60
Պերովրնի սոնաթին վրայ (Ա—Բ—Գ)	62—64
Դուն հենաւոր մանկութիւն	65
Չաւակս	66
Ծռ այս գիշեր	67
Մեկ - հասիկս	68
Սպազան	70
Գիրտեր	71
Սկոբբ վաղուան սեւին առջեւ	74
Մահուան	76
Տեսիլք հին կեանքի	78
Ծիծաղ	89
Եկզոս	80
Մայր եւ որդի	82
«Հոգիս»	84
Ծրք կը խորհիմ	85
Դադափարաց գետինը	89
Երագին ծնունդը	87
Մուսկոն Աթենքի	88
Վերջադոյսի ամպեր	89
Բաց ծովուն մեջ	91
Գառաւանակ (Ա — Բ — Գ)	92—94
Շուն մը	95
Տղաքներ կան	96
Եւր սենեակ	97
Անկարեղիւն	90
Գոյիս	100

Ազոբի հիւանդ տղու մը հատար	101
Հաշունեյարդար	102
Երեկ զիշեք	103
Այս երազը	104
Անոնք	105
Ոչ ոք	106
Մենուքիւն	107
Ասեղոք	108
Յիւմորի պէս	109
Վերջումում	110
Սալորենիկ	111
Հանոյք	112
Եզիպտուհի	113
Իսկիւսար	114
Սերը տասերվեց տարեկանին	115
Ծառի ծաղիկներ	116
Յիւնականակ	117
Ջուրերուն վրայ ստուերներ	118
Թիթեռնիկ	119
Լիւսամպուրիկի պարտեզին մէջ	120
Ծովափ	121
Բարձրացում	122
Գալիլիական	123
Հառաչանք	124
Գուրը	125
Կ'զգամ այր	126
Ռոնում	127
Շուարում	128


Այս հատորին դուրս կը մտնան նոյն ժամանակաշրջանին (1919—33) գրուած  
ուրիշ բազմաթիւ քերթուածներ, որոնց մէջ սկզբող շարք մը  
«Մանկութեան Պարտէզի» ընդհանուր խորագրով կրող:



ՎՐԻՊԱԿ	ԷՁ	ՏՈՂ	ՍԻԱԼ	ՈՒՂԻՂ
	45	12	ի հընուց...:	ի հընուց...:
	56	վերջին	անունովըզ	անունովզ
	65	6	անձկութեամբ	անձկութեամբ.
	66	3	կոծեցաւ.	կոծեցաւ
	68	4	երկարորէն	երկարորէն,
	62	7	չբամոյն	չըբամոյն
	72	10	հակառակ	հակառակ.
	80	2	իջած	իջնոզ
	88	10	լուսասպիտակ	լըռասպիտակ
	93	8	կարծենք	կը կարծենք
	97	4	պատմէ	պատմէ պիտի
	104	5	եյս	Այս
	105	3	կ'ելեն,	կ'ելենն
	21 ստորև մուցուած է թուականը՝ 1923			

ՅՊԱԳՐ. « ԱՐԱՎՍ » - ՓԱՐԻՋ

IMPR. ARAX - 221, RUE LAFAYETTE, PARIS



647

ՏՐԱՆՔ


A  $\frac{11}{534.90}$

Գնելու համար դիմել առ

V. TĒKĒIAN

22, Rue Saint-Sulpice, Paris (6e)

վճարում կանխիկ, գրավաճառներում՝ 25 օ/օ զեղ:



ՅՊԱԿԸ « ԱՐԱՅՍ » - ՓԱՐԻՋ

IMPR. ARAX - 22, RUE LAFAYETTE, PARIS

ԳՆԱ Գործարարության Գիրք Գրադ.

220053100